

22-23(524-525)

03.09.2018

Յրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՅՊԿԵՐՊ ՏԵՎԵԼՈՒ ԵՆ ՉԵՐՈՍՆԵՐԸ

Արցախը հերթական անգամ նշում է Հանրապետության հռչակման օրը՝ մեր անկախության տոնը: 1991-ի սեպտեմբերի 2-ին, երբ ժողովրդական պատգամավորների ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդները համատեղ նիստում արձանագրում էին խորհրդային տարածքում մի Նոր պետության ծնունդը, թերևս նաև պատկերացնում էին, թե ինչ դժվար ճակատագիր է սպասում այդ երկրին: Պատկերացնում էին, որովհետև Արգբեջանը Սումգայիթում, Չանկուրում, Բաքվում և հայաշատ մյուս բնակավայրերում մինչ այդ իրականացրած ջարդերով հայերին հուշել էր «ազատության փշոտ ուղին»:

Այդպես էլ իրականում եղավ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ինքնակայացման առաջին քննությունը հանձնեց ոչ թե դիվանագիտական կամ սոցիալ-տնտեսական ճակատներում, ինչը բնորոշ է անկախության ուղին բռնած շատ երկրների, այլ պատերազմի դաշտում: Մենք արժանապատվորեն հաղթանակ տարանք, սակայն պատերազմը դրանով չավարտվեց: Ռազմական գործողությունների վերսկսման հարաճուն սպառնալիքից զատ Արցախի ժողովուրդը ստիպված է հաղթահարել բազում դժվարություններ նաև կենսական մյուս բնագավառներում: Ժամանակը նորանոր մարտահրավերներ է առաջադրում, որին պիտի մշտապես պատրաստ լինել:

Անշուշտ, Արցախի Հանրապետությունը դժվար է համեմատել 1988 թվականի տնտեսապես ինքնաբավ երկրամասի հետ. միջազգային չճանաչվածությունը, Արգբեջանի հետ շարունակվող հակամարտությունը, տակալան շրջափակումը շոշափելիորեն ազդում են երկրի լիարժեք կայացման գործընթացի վրա: Բայց եթե առանձնացնելու լինենք անկախության շրջանի մեծագույն նվաճումը, կարող ենք շեշտել, որ դա մեր միասնականությունն է, որը եղել է, կա ու կլինի: Դա է ազգի գոյատևման գլխավոր երաշխիքը, այդ գաղափարի վրա են խարսխվում հայ մարտիկի և ուսուցչի անասնաման հայրենասիրությունն ու անձնվիրությունը:

Արցախցիներն իրոք սիրում են հայրենիքը, համառ են, դժվարությունների առաջ չերկնջող, ինչու չէ՞ նաև քչով բավարարվող: Ազգաբնակչության կենսապայմանների բարելավման ուղղությամբ պետության կողմից լուրջ ջանքեր գործադրվում են, սակայն արցախցիների անտրտունը հայրենասիրությունը ճիշտ կլինի գնահատել որպես պայքերական օջախներին արմատակալած լինելու դարավոր ավանդույթ: Սա է մեր ֆենոմենը, և այս բնորոշման մեջ են խտացված Արցախի անցյալը, ներկան ու ապագան:

Հատկանշական է, որ անկախության հռչակման տոնակատարությունը համընկնում է նոր ուսումնական տարվա մեկնարկին: Գիտելիքի ու դպրության օրվա խորհուրդը այս համատեքստում դիտարկելով, փաստենք, որ անկախության սերունդը գերազանց է սերտել ազատության դասը: Հիրավի՝ անհնար է ապրել կենդանի հերոսների հետ կողք-կողքի ու ծշմարիտ դասեր չառնել: Այդկերպ ծնվելու են գալիք ժամանակների հերոսները, այդպես վստահորեն ընթանալով՝ մենք անպայման հասնելու ենք մեր ազգային վեհ նպատակներին: Մենք այլընտրանք չունենք:

Շնորհավոր բոլորիս տոնը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՇ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈՒ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ



Սիրելի՛ հայրենակիցներ, Արցախի իշխանությունների և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ Արցախի Հանրապետության օրվա առթիվ:

1991 թվականի սեպտեմբերի 2-ը չափազանց կարևոր եւ հիշարժան օր է մեր ժողովրդի կյանքում, քանի որ ազատ եւ անկախ հանրապետության հռչակումը հիմնովին ու արմատապես փոխեց մեր պատմության ընթացքը: Այլեւս մեր ճակատագիրը մեր ձեռքերում էր, մենք էինք մեր ապագայի տերն ու կերտողը: Մեր սերունդն ստանձնեց հսկայական պատասխանատվություն՝ ինչպես մեր նախնիների հիշատակի առջև, այնպես էլ հետագա սերունդների, մեր հայրենիքի եւ համայն հայության ապագայի համար:

Եվ այդ պատասխանատվության զգացումն է, որ այս բոլոր տարիների ընթացքում օգնել է մեզ հաղթահարել անասելի դժվարություններն ու փորձությունները, կառուցել ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետություն, պաշտպանել պատերազմի մեջ հայտնված հայրենիքը, վերականգնել ավերված տնտեսությունը, իրականացնել բազմաբնույթ ծրագրեր՝ ուղղված բաղաձայնի սոցիալական խնդիրների լուծմանը, բնակչության կենսապայմանների բարելավմանը:

Այդ պատասխանատվության զգացումն է, որ այսօր պարտավորեցնում է մեզ լինել ավելի ուժեղ եւ ամուր, միասնական ու համախմբված, ամեն ինչ անել՝ հանուն մեր հայրենիքի գորացման ու բարգավաճման, հանուն համազգային նպատակների իրականացման: Դա են պահանջում մեր հետո տղաների թափած արյունը եւ այն թանկ գինը, որ վճարել է հայ ժողովուրդն իր ազատության ու անկախության համար:

Թանկագին հայրենակիցներ, Մեկ անգամ եւս շնորհավորում եմ ձեզ հիշարժան տոնի առթիվ եւ մաղթում խաղաղություն, քաջառողջություն ու նոր հաղթանակներ՝ մեր ժողովրդին ու հայրենիքին:

ԲԱՐԻ՝ ԵՐԹ, ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԱՆՔ՝ ՆՈՐԻ ՍԿԻԶԲ

Արցախի Հանրապետության 217 հանրակրթական դպրոցներում 24 339 աշակերտների համար սեպտեմբերի 1-ին հնչեց նոր ուսումնական տարին ազդարարող առաջին զանգը: 2441 աշակերտի համար այն հնչեց առաջին անգամ:

Սեպտեմբերի 1-ը՝ Գիտելիքի և դպրության օրը, մի առանձին ուրախությամբ և տոնական մակարդակով է նշում մեր ժողովուրդը: Օրվա խանդավառությանն ավելանում է անսահման հպարտությունը: Առաջին զանգը նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ ավետում է Արցախի Հանրապետության հռչակման տարեդարձը՝ Անկախության տոնը:

Վաղուց արդեն այն սերունդն է դպրոց հաճախում, որ ծնվել ու մեծացել է ազատ ու անկախ Արցախի Հանրապետությունում:

Սեպտեմբերի 1-ը նոր շրջափուլ է ամբողջ հասարակության համար. սկսվում է ուսումնառության և աշխատանքային գործընթացի եռուն, հետաքրքիր շրջանը:

Հանրապետության բոլոր կրթօջախներում մեծ հանդիսավորությամբ է նշվում ուսումնական տարվա սկիզբը: Տոնի կապակցությամբ գրեթե միաժամանակ հանրապետության բոլոր համայնքներում հնչում է Արցախի պետական օրհներգը:

Ստեփանակերտի Ս. Արուստի անվան հ. 1 հիմնական՝ հանրապետության անենախոշոր դպրոցի Առաջին զանգի արարողությանը ներկա էր ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

Ի դեմս այս ուսնաստատության՝ նախարարը շնորհավորել է բոլորին ուսումնական տարվա մեկնարկի և Արցախի Հանրապետության հռչակման առթիվ: Իր խոսքում Ն. Աղաբալյանն ասել է.



«Սիրելի՛ աշակերտներ և ուսուցիչներ, սիրելի՛ ծնողներ, շնորհավորում եմ ձեզ և ի դեմս ձեզ՝ մեր հանրապետության բոլոր դպրոցականներին, մանկավարժներին, ուսանողներին ու դասախոսներին, բոլոր քաղաքացիներին՝ ուսումնական նոր տարվա մեկնարկի առթիվ: Սեպտեմբերի 1-ը հիշարժակի տոն է բոլորիս համար. առաջին զանգի ղողանջների հետ կաթոնս մեր կյանքը լցվում է նոր գույներով ու երանգներով, նոր իմաստով ու բովանդակությամբ: Պատմական իրադարձությունների բերումով Գիտելիքի և դպրության օրն Արցախում նշվում է Անկախության տոնի հետ միասին: Եվ արդեն 27-րդ անգամ ուսումնական տարին մեր հանրապետությունում մեկնարկում է անկախության դասով: Կարծում եմ, սրանում մեծ խորհուրդ կա, քանի որ անենակարևոր դասը երեկ, այսօր և վաղը որ կա և պետք է լինի՝ ամուր պահել պետության հիմքերը և մեր գիտելիքներով, մեր աշխատանքով ու հայրենիքին մեր ծառայությամբ ամեն օր մի քար ավելացնել այդ հիմքի վրա: Որովհետև պետականությունն է, որ երաշխավորում է անվտանգություն և կրթության, աշխատանքի և զարգացման հնարավորություն: Հենց 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Անկախության հռչակումը և անհավասար պատերազմում մեր հաղթանակը երաշխավորեցին, որ մեր երեխաները կարողանան սովորել ահա այսպիսի պայմաններում: Սիրելի՛ աշակերտներ, այսօր գուցե ավելի,



քան երբևէ, կարևորվում է գիտելիքը, և գիտելիքի հետ մեկտեղ՝ անձնային որակների ու կարողությունների զարգացումը: Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների մեր աշխարհում կյանքը շատ արագ է փոփոխվում, մենք էլ պետք է արագ արձագանքենք այդ փոփոխություններին:

Սիրելի՛ ծնողներ, մենք ունենք իրաշալի ուսուցիչներ, որոնք անմնացորդ նվիրումով կատարում են իրենց առաքելությունը՝ կրթում, դաստիարակում են սերունդներ՝ յուրաքանչյուր աշակերտի մեջ բացահայտելով անհատին, նրան ճանապարհելով դեպի լուսավոր ապագա:

Սիրելի՛ ուսուցիչներ, վստահ եղեք, որ ձեզ հետ միասին մենք փնտրելու և ստեղծելու ենք նոր հնարավորություններ մեր երեխաներին ավելի լավ կրթություն տալու համար: Նորից շնորհավորում եմ բոլորին և մաղթում մեր աշակերտներին հետաքրքիր ճանապարհ դեպի գիտելիքների զարմանահրաշ աշխարհ, մեր ուսուցիչներին՝ ուժ ու կորով, մեր հայրենիքին՝ բարգավաճում:

Տե՛ս նաև՝ էջ 2

ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԻ ՇԵՄԻՆ



Նոր ուսումնական տարվա շեմին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի մասնակցությամբ հան-

ջանային և քաղաքային բաժինների վարիչները, դպրոցների տնօրենները, ներկա էր ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հա-

րությունյանը:

Երկու հանրապետությունների կրթական գերատեսչությունների ղեկավարները ներկայացրին ոլորտի առաջնահերթ խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ կատարվող քայլերը, քննարկվեցին օգոստոսյան խորհրդակցություններում բարձրացված հարցերը, առաջարկությունները:

Ն. Աղաբալյանը նշեց, որ նախորդ տարիներից սկիզբ առած այս ավանդույթով կփորձեն ավելի արդյունավետ դարձնել համագործակցությունը:

ՀՀ ԿԳ նախարար Ա. Հարությունյանը կարևորել է կրթական երկու համակարգերի ինտեգրվա-

ծության բարձր աստիճանը՝ նշելով, որ նախորդ ամիսներին Ն. Աղաբալյանի հետ մի քանի հանդիպումներ է ունեցել, քննարկել են հիմնականում հանրակրթության ոլորտին առնչվող խնդիրներ և որոշ լուծումներ, որոնք Արցախում կիրառվում են կամ պետք է կիրառվեն, շատ հետաքրքիր են նաև իրենց համար: Անդրադառնալով անցած ամիսներին համատեղ իրականացրած ճամբարների նախագծին՝ Ա. Հարությունյանն ասաց, որ պիլոտային այդ ծրագիրը հաջողված էր, և եկող տարի ավելի շատ խմբեր կայցելեն Արցախ:

ԲՈՒՏԱԿԱՆ ԱՐԴՎ ՆՈՐԱԿԱԶՄ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍԱԸ

ՈՂՋՈՒՅՆ, ԳՊՐՈՑ, ՈՂՋՈՒՅՆ, ՆՈՐ ԿՅԱՆՔ

Դպրոցի տնօրեն ժաննա Բալայանի համար մեծ պատասխանատվություն է դեկավարել ավելի քան 1700 աշակերտ ունեցող կրթօջախը: Մասնավորապես կոլեկտիվի հետ միասին նա ուրախ է ամառային հանգստից հետո կրկին դպրոցի գրկում տեսնել խիճողով, ուրախությամբ լցված սաներին, որոնցից 208-ը առաջին առաջին դասարանցի է: Շնորհավորելով ներկաներին Գիտելիք օրվա և սեպտեմբերի 2-ի՝ Արցախի Գանձարարության հռչակման տոնի կապակցությամբ՝ նա ասաց.



- Այսօր լույսի տոն է, այդ լույսը տալիս է գիտելիքը: Գնահատեք այն և երբեք չբավարարվեք ունեցած գիտելիքներով: Մեր երիտասարդ երկրին շատ են պետք կրթված մասնագետներ ամենատարբեր բնագավառներում: Նրանց բոլորի կայացման ճանապարհը սկսվում է դպրոցից: Այն անկախության տոնն ենք նշելու վաղը՝ սեպտեմբերի 2-ին: Արդեն 27 տարեկան է մեր անկախ, երիտասարդ պետությունը: Աստված պահի-պահպանի մեր Արցախը, Հայաստան աշխարհը, թող խաղաղ բացվեն արշալույսները, և թող հայն արարի իր բիրիկական երկրում: Ազատությունն ու անկախությունը մարդու և ազգի համար մեծագույն արժեք են: Ապագան մեր երեխաների փայլուն աչքերն են: Թող անկոտրուտ լինի հայ զինվորը, և թող միշտ ժպտան մեր երեխաները:

Առաջին հանդիպում առաջին ուսուցչուհու հետ



Կանչում է մեր ապագան, Բացվել է հրաշք ծիածան...



«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրության համապատասխան: Հաշվի առնելով, որ 2018թ. հունիսի 17-ին լրացել է ԱրՊՀ խորհրդի լիազորությունների ժամկետը, ԱՀ կառավարությունը 2018թ. հուլիսի 27-ի որոշման համաձայն՝ հաստատել է ԱրՊՀ խորհրդի նոր կազմը:

Օգոստոսի 21-ին տեղի ունեցավ նորակազմ խորհրդի անդամիկ նիստը: Բացելով այն՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը նշեց, որ Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման գործող կարգի համաձայն՝ ԱրՊՀ խորհուրդը ձևավորվել է հիմնարկի, Կրթության, գիտության և սպորտի նախարարության, ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և համալսարանի ուսանողական խորհրդի կողմից առաջադրված 7-ական անդամներից, և հրապարակեց անդամների անունները՝ շնորհավորելով խորհրդի նոր կազմին և մաղթելով արդյունավետ աշխատանք:

Առաջին նիստին հրավիրվել էր Աժ խոսնակ, ԱրՊՀ խորհրդի նախորդ նախագահ Աշոտ Դուլյանը, որը նախագահել է խորհուրդը 2016-2018թթ.:

Որպես լիազոր մարմնի ղեկավար՝ Ն. Աղաբալյանը շնորհակալություն հայտնեց նրան և ի դեմս նրա՝ նախորդ խորհրդի անդամների՝ վերջին 5 տարիներին իրականացրած շահագրգիռ, բեղմնավոր աշխատանքի համար:

ԱրՊՀ ղեկավարի պաշտոնակատար Մանուշ Մինասյանը նույնպես շնորհակալություն հայտնեց՝ տեղեկացնելով, որ հրավիրվել էր նաև նախորդ խորհրդի առաջին նախագահը՝ նախկին վարչապետ Արայիկ Հարությունյանը, որը հանրապետությունում չլինելու պատճառով չի ներկայացել նիստին:

Աժ խոսնակը, շնորհակալություն հայտնելով համատեղ աշխատանքի համար, նշեց, որ իրենց ջանքերն ուղղված են եղել այն նպատակին, որ ԱրՊՀ-ն, որպես գիտակրթական կենտրոն, պետք է լինի երկրի այցեքարտերից մեկը, և հաջողվել է դրա հիմքերը դնել: Նշելով, որ այդ տարիների ընթացքում համալսարանն իր ինքնուրույն, անհատական ձեռագիրն է թողել մեր երկրի բարձրագույն կրթության համակարգում, նա հույս հայտնեց, որ այսուհետ էլ կշարունակի լավագույն ավանդույթները, և հաջող 5 տարիներին բուն իր պայմանների և կրթության որակի ապահովման առումով նոր հաջողություններ կարձանագրի:

Մինչև խորհրդի ղեկավարի ընտրությունը նիստը նախագահեց տարիքով ավագ անդամը, որն էլ հրապարակեց օրակարգի առաջին հարցը՝ խորհրդի

նախագահի և քարտուղարի ընտրություն:

Ներկաների առաջարկությամբ միաձայն խորհրդի նախագահ ընտրվեց ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, քարտուղար՝ բանասիրական ֆակուլտետի ղեկան Լուսինե Մարգարյանը:

«Ինձ համար մեծ պատիվ է լինել ԱրՊՀ խորհրդի նախագահ, որի շրջանավարտն եմ: Համոզված եմ, որ համատեղ աշխատանքով մեզ կհաջողվի այս ժամանակահատվածում ապահովել համալսարանի զարգացումը և աշխատանքների պատշաճ իրականացումը», - ասաց Գ. Մարտիրոսյանը:

Նրա նախագահությամբ շարունակված նիստն օրակարգի հաջորդ հարցով հաստատեց ԱրՊՀ խորհրդի աշխատակարգը: Խորհրդի աշխատակարգը սահմանում է ընդհանուր դրույթներ, խորհրդի կառուցվածքը, իրավասությունները, նիստերի գումարման կարգը, քվեակազմը, ընթացակարգը, քվեարկությունը, հանձնաժողովները և որոշումները:



2018թ. օգոստոսի 15-ին լրացել է ԱրՊՀ ղեկավար Մանուշ Մինասյանի պաշտոնավարման ժամկետը: ԿԳՍ նախարարի հրամանով նա նշանակվել է ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով ղեկավարի ընտրությունը:

Նիստի օրակարգի հաջորդ հարցը ԱրՊՀ ղեկավարի ընտրության ընթացակարգի հաստատումն էր: Ընթացակարգը սահմանում է ղեկավարի թափուր պաշտոնի համար մրցույթի կարգը, հավակնորդների առաջադրումը, ներկայացվող պահանջները:

Համաձայն համալսարանի կանոնադրության՝ ղեկավարի ընտրության ընթացակարգի, ընտրությունը կատարվում է մրցույթի ձևով: ԱրՊՀ-ն աշխատանքային երկու օրվա ընթացքում պետք է ապահովի համապատասխան հայտարարության տարածումը, և 30-րդ օրը կգումարվի խորհրդի նիստ, որը կընտրի ղեկավար:

Խորհրդի նորընտիր նախագահի առաջարկությամբ Մ. Մինասյանը հակիրճ ներկայացրեց համալսարանի հավատարմագրման և շենքի վերանորոգման ընթացքը: Տեղեկացրեց, որ հավատարմագրման գործընթացը սկսվել է նախորդ տարեվերջին, ստեղծվել է աշխատանքային 10 խումբ՝ համապատասխան կազմե-

րով, ըստ այդմ՝ կատարվում են նախատեսված աշխատանքները ժամանակացույցով և մինչև պահանջվող ժամկետը՝ այս տարեվերջ, գործընթացը կավարտեն:

Ինչ վերաբերում է համալսարանի շենքի վերանորոգմանը, այն իրականացնում են համապատասխան կազմակերպությունները, բայց դրան նախորդել է իրենց կողմից բավական լարված աշխատանք՝ կապված գույքի տեղափոխման, սենյակների կահավորման հետ: Համալսարանն ամբողջությամբ անցնելու է երկհերթ աշխատանքի: Նա հույս հայտնեց, որ վերանորոգման վերջնաժամկետը՝ 2020թ. դեկտեմբերի 1, չի փոխվի: Բավականին դժվարացել է ֆիզկուլտուրա առարկայի հարցը, քանի որ դասիչը հարմարեցվել է տարբեր նպատակների ծառայեցմանը: Սեպտեմբերի 1-ից համալսարանում ունենալու է նոր կառուցվածք: Օտար լեզուների և անգլերենի ամբիոնները միավորվել են, այն կոչվելու է ռոմանագերմանական լեզուների ամբիոն:

Միացյալ անուն կկրեն ՆՁՊ-ի և ֆիզկուլտուրայի ամբիոնները, բայց գործող հաստիքները կպահպանվեն:

Հավատարմագրման գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար բացվելու է որակի ապահովման կենտրոն, լինելու է նաև կարիերայի կենտրոն՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների մասով, շրջանավարտների տվյալների բազա ստեղծելու և նրանց հետ կապի հաստատման ուղղությամբ: Կստեղծվի վարչություն, որի մեջ կմտնի ուսումնական գործընթացի վերահսկողության բաժինը:

Խորհրդի նիստը եզրափակեց նախարար Ն. Աղաբալյանը: Շնորհավորելով խորհրդի նորընտիր նախագահին և անդամներին՝ նա ընդգծեց, որ խորհուրդն իր աշխատանքները պետք է սկսի կարևոր փուլում: Նախորդ հինգ տարիների առանձնահատկությունները պայմանավորված են եղել Բոլոնիայի գործընթացին միանալու աշխատանքներով, այսօր՝ հավատարմագրման և շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի արդիականացման: Անցումային փուլ էր և շատ դժվար էր աշխատանքները ճիշտ կազմակերպելու ու համակարգելը, ինչը հաջողվել է: Նորակազմ խորհրդին մաղթելով հաջողություն՝ նախարարը հույս հայտնեց, որ այն հետամուտ կլինի սկսած ծրագրերը շարունակելուն և բովանդակային փոփոխություններ ապահովելուն, համալսարանի վարկանիշի շարունակական աճին:

«Արցախի մայր բուհը մեծ դերակատարություն ունի մեր երկրի զարգացման և հեղինակության գործում, և կարծում եմ, մեր բոլորիս համատեղ ջանքերով կկարողանանք դրական տեղաշարժեր և առաջընթաց արձանագրել», - նիստն այսպես եզրափակեց նախարարը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԲԱՅ ՄՐՅՈՒՅԹ

Արցախի Գանձարարության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար: Համալսարանի ղեկավար կարող է ընտրվել կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ու գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում ունեցող անձը: Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում (ԱՀ ԿԳՍ նախարարի անունով), իսկ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվելու մասին հավակնորդի գրավոր համաձայնությունը,
- բ) լուսանկար՝ 3x4 չափսի,
- գ) քաղվածք աշխատանքային գրքուկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը և (կամ) գիտական կոչումը հաստատող վկայականների պատճեններ,
- զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
- ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկ,
- թ) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե այն գործում է),
- ժ) հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 2018 թվականի **օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 21-ը՝ ժամը 18.00** (բացի շաբաթ և կիրակի օրերից), Արցախի պետական համալսարան: Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Մխիթար Գոչի 5, հեռախոս՝ 047-94-03-82: Մրցույթը տեղի կունենա 2018 թվականի հոկտեմբերի 2-ին՝ ժամը 11.00-ին, Արցախի պետական համալսարանի շենքում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՅԱՆ

ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՆՈՐ ՈՒՄՈՒՄԱԿԱՆԻ ՇԵՄԻՆ

1 ԱՅ Նախագահի հետ հանդիպման ժամանակ ամրագրել են, որ կարևոր են շփումները երկու հանրապետությունների դպրոցականների միջև: Նախատեսվել են առաջիկայում Արցախի և տարածաշրջանում լավագույնը Շուշիի «Եզնիկ Մոզայն» ուսումնարանում կրթաթոշակ սահմանել և ՀՀ-ից ուսանողներ գործուղել այստեղ: Լավագույն փորձը, որ այստեղ կուտակված է, պետք է ծառայի ամբողջ հայրենիքին: այս կարծիքին է նա: Ցավով արժանազան, որ շատ մասնագիտությունների գծով չունեն մասնագետներ, և Շուշիի ուսումնարանի հնարավորությունը պետք է առավելագույն օգտագործեն՝ աշխատաշուկան մասնագետներով համալրելու համար: Երկու նախարարություններով կքննարկեն նաև Արցախում և Հայաստանում ընդհանուր աշխատաշուկայի վիճակը ու դրան կհամապատասխանեցնեն պետպատվերը բուհերում:

Ա. Հարությունյանը անդրադարձել է հանրակրթության կառավարման հետ կապված ՀՀ-ում իրականացվող մի շարք քայլերի՝ դպրոցներում խորհուրդների ձևավորմանը, տնօրենների ընտրությանը, վերջիններիս լիցենզիա տրամադրելուն, ուսուցիչների վերապատրաստմանը: Տեղեկացրեց, որ նախատեսված են ծրագրերի փոփոխություններ կատարել բնագիտական առարկաների դրվածքը բարձրացնելու ուղղությամբ: Դա ենթադրում է նաև նոր չափորոշիչների, նոր դասագրքերի մշակում: Այս ճանապարհին լայնորեն ներգրավելու են ուսուցիչների՝ կարևորելով նրանց գործնական գիտելիքներն ու աշխատանքը:

ԱՅ ԿԳՄ նախարար Ն. Աղաբալյանը տեղեկացրեց ոլորտում սկսած մի շարք բարեփոխումների մասին: Այսուհետ դպրոցների տնօրենների աշխատանքը գնահատվելու է ոչ միայն ուսման որակով և առաջադիմությամբ, այլև նրանով, թե ինչքանով են դպրոցները ընկալում և ներառում հանրապետության անունով ինչպես ՀՀ դպրոցների, այնպես էլ Ափյուռքի մեր կրթօջախների հետ: «Շատ կարևոր է, որ այդ համագործակցությունը լինի, որովհետև հենց կրթությունը պետք է ապահովի «միացյալ հայրենիք» գաղափարի կենսագործումը»,- ասաց նա:

Ն. Աղաբալյանը տնօրենների ու-

ղղությունը հրավիրեց ուսուցիչների թափուր տեղերի համալրման համար մրցույթներին: Հղում անելով մասնավորապես հանրապետության գործող մրցույթների կարգը կատարյալ չէ, և ընդհանրապես որևէ հարցաշարով հնարավոր չէ պարզել հավակնորդ ուսուցիչ մասնագիտական կարողությունները՝ նա ասաց, որ հետևյալ նորամուծությունն են արել. տնօրենը մրցույթում հաղթած ուսուցիչի հետ պայմանագիր կնքի տվյալ ուսումնական տարվա համար, իսկ ուսումնական տարվա ավարտից հետո կնքվի մասնավորապես մեթոդմիավորումների եզրակացության հիման վրա որոշվի՝ շարունակվի՞ այդ ուսուցիչի հետ պայմանագիրը, թե՞ հայտարարել նոր մրցույթ: Ն. Աղաբալյանի խոսքով՝ նաև ընդարձակվել են համագործակցությունը «Դասավանդիր, Հայաստան» ծրագրի հետ: Մինչև այս Արցախում այդ ծրագրով դասավանդում էր 4 ուսուցիչ, սեպտեմբերից նրանց թիվը կավելանա 14-ով: Նրանցից 10-ը կդասավանդի Քաջաթաղի շրջանի դպրոցներում. հենց այստեղ ամենաշատ ուսուցիչների կարիք կա:

Նախարարը տեղեկացրեց գյուղական բնակավայրեր ուղեգրման նոր կարգի մասին: Գործող կարգով 30 և ավելի կմ հեռավորությամբ ուղեգրվելու դեպքում ուսուցիչը ստանում էր աշխատավարձի 50 տոկոսի չափով հավելավճար: Կարգի վերանայումով մտադիր են պարզապես ճանապարհածախսը փոխհատուցել բոլոր նրանց համար, ովքեր կցանկանան այլ դպրոցում ևս դասավանդել, որովհետև շատ հաճախ հարևան գյուղի դպրոցում կա համապատասխան մասնագետ, բայց քսանի որ մշակված 30 կմ հեռավորությունը չկա, ուսուցիչը չափազանցված չէ գնալ այդտեղ աշխատելու:

Հանդիպումն այժմ տևում անցավ հարց ու պատասխանի ձևով: Քննարկվեց ՀՀ նախարարի այն հայտարարությունը, որով նախատեսվում է 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական բոլոր քննությունները դարձնել կենտրոնացված: Հնչեցին տեսակետներ դրա դրական կողմի և սպասելիք ռիսկերի մասին: Բնագիտամաթեմատիկական առարկաների դրվածքի բարձրացման համար Սարտուհուն ԿՍ բաժնի վարիչ Զորիկ Դուլյանը կարծիք

հայտնեց, որ պետք է քննի, կենսաբանություն, ֆիզիկա մասնագիտություններ սովորող ուսանողներին տալ բարձր կրթաթոշակ, իսկ մասնագետներին՝ բարձր աշխատավարձ. այդ կերպ կբարձրանա այդ առարկաների նկատմամբ շահագրգռվածությունը:

Այս առնչությամբ Ն. Աղաբալյանը ասաց, որ մշակվում է բնագիտական առարկաների դասավանդման դրվածքը բարձրացնելու հայեցակարգ, բայց չպետք է մի ծայրահեղությունից մյուսն ընկնել. կարևորելով բնագիտականը՝ մոռանալ մյուս առարկա-

ների մասին: Պարզապես պետք է իրականացնել նպատակային ծրագիր, որը կարող է ոչ բոլոր աշակերտների համար լինել: Դա կարող է լինել տարբեր ձևաչափով, ասենք՝ կիրակնօրյա դպրոցների: «Այո, պետք է ուղղորդել և խրախուսել թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին՝ կախված նրանց արդյունքներից»: Փոքր դպրոցների համար կիրառության մեջ դնել շրջիկ լաբորատորիաները և այլն:

ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը առաջարկեց օգտագործել գնահատման համակարգի 1-ից մինչև 20 միավորները՝ դրանք մտցնելով ատեստատ: Նրա մյուս առաջարկությունը 9-րդ դասարանն ավարտող աշակերտների՝ բնագիտական բոլոր առարկաներից քննություն հանձնելու մասին էր: Հիմնական դպրոց է ավարտում աշակերտը, հետևապես, պետք է իմանալ նրա գիտելիքների մակարդակը բոլոր առարկաներից, իսկ եթե բոլորից հնարավոր չէ կենտրոնացված քննություն կազմակերպել, գոնե՝ բնագիտական բոլոր առարկաներից և ոչ թե միայն մեկից՝ ընտրովի կարգով: Իսկ 12-րդ դասարանում պետական ավարտական քն-

նությունները վերացնել:

ԱՅ ԿԳՄ ֆիզիկական կուլտուրայի գլխավոր մասնագետ Արթուր Աթանեսյանը բարձրացրեց ֆիզկուլտուրա առարկան որպես ազգաբնակչության առողջության միջոց դիտարկելու խնդիրը:

Այդ, ինչպես նաև ՆԶՊ առարկաների գծով նախարարի հանձնարարականները կան, տեղեկացրեց Ա. Հարությունյանը:

ԱՅ փոխնախարար Միքայել Համբարձումյանը բարձրացրեց ծրագրային անհամապատասխանությունը տարբեր առարկաների միջև. միջառարկայական կապերը չեն պահպանվում:

Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանի առաջարկով կազմակերպվում է դպրոցում: Ծրագրի մասին է 1-ին դասարանի ծրագիրը: Այս և տարրական դասարանների ծրագրերը միավորել՝ այդպես կրճատելով մեկ տարի:

12-ամյա ուսուցման կապակցությամբ Ա. Հարությունյանը դրական արտահայտվեց, պարզապես պետք է դրան ճիշտ բովանդակություն հաղորդել:

Չշրջանցվեց նաև ուսուցիչների աշխատավարձի բարձրացման հարցը:

Այս առնչությամբ Ն. Աղաբալյանը ասաց, որ եթե անգամ 10 տոկոսով բարձրացնեն ուսուցիչների աշխատավարձը, որով ընդամենը 3-4 հազար դրամի փոփոխություն կարող է լինել, լրացուցիչ 1 մլրդ դրամ կպահանջվի: Այդ հարցը բազմիցս արծարծվել է: «Մինչև չկարողանանք համակարգն օպտիմալացնել, չենք կարողանալու ուսուցիչ աշխատավարձի բարձրացման հարցը լուծել»,- ասաց նա: Խնդրի բարդությունը հետևյալն է. եթե մայրաքաղաքում մեկ ուսուցիչն աշխատում է 35 աշակերտի հետ, ապա շրջաններ կան, որտեղ մեկ աշակերտին 2 ուսուցիչ է բաժին ընկնում:

Ավելի քան երկուսուկես ժամ տևած հանդիմանական ժամանակ շրջափակվեցին բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանեցին երկու նախարարները:

Նախարարության փորձառու աշխատող Սոս Արզումանյանի դիտարկմամբ՝ 20 տարի առաջ ՀՀ ԿԳ

նախարարի հետ մեկ հանդիպման ժամանակ ինքը բարձրացրել էր գնահատման 5-բալյան համակարգի հարցը, որ այն իրեն սպառել է, և գնահատման նոր համակարգ է անհրաժեշտ: Երկու տասնամյակ անց այդ հարցը դարձյալ օրակարգային է: «Բազմաթիվ խնդիրներ բարձրացվեցին, որոնք բոլորն էլ կարևոր են՝ լաբորատորիաներ, դասագրքեր, ծրագրեր, բայց ինչպես Հայաստանում, այնպես էլ այստեղ գլխավոր հարցն ուսուցչական կազմերն են՝ ուսուցիչների ռեալ վերապատրաստման, բուհական համակարգում նրանց մասնավորապես կրթության և ուսուցիչների ատեստավորման: Բարձրացված հարցերը երկրորդական դեմքում կլինեն, եթե ուսուցիչն իր տեղում լինի»,- այս կարծիքին է նախկին տեսչապետը՝ վկայակոչելով ուսուցիչների թափուր տեղերը, որոնք լրացնելու համար չկա ռեզերվ: «Լավ ուսուցիչներ ունենք, բայց փաստ է, որ մի զգալի մասը աշխատակազմի չի տիրապետում, նրանց պատրաստության աստիճանն այն չէ: Սա ամենահուզող հարցն է»,- ասաց Ա. Արզումանյանը:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ ԱՅ ԿԳՄ նախարարը վերստին ընդգծեց յուրաքանչյուրի՝ իր գործին ամենայն պատասխանատվությամբ վերաբերվելու անհրաժեշտությունը՝ մշելով, որ մեխանիզմներ են մշակվում յուրաքանչյուրի աշխատանքը ճիշտ գնահատելու ուղղությամբ: Ընդհանուրապես հայտնվելու բոլորին՝ կառուցողական քննարկումների համար և, շնորհավորելով նոր ուսումնական սկսվելու և Արցախի Հանրապետության հոշակամ 27-րդ տարեկանի կապակցությամբ՝ Ն. Աղաբալյանը ՀՀ ԿԳ նախարար Ա. Հարությունյանին հանձնեց Արցախյան շարժման 30-ամյակի հուշամեդալ՝ մարդկությանը արդյունավետ աշխատանք, հուսալով երկարատև ու կառուցողական համագործակցություն:

Իր երախտագիտությունը հայտնեց Ա. Հարությունյանը ասաց, որ պարզևս ավելի է պարտավորեցնում սերտացնել կապերն Արցախի հետ: «Իմ այցելություններն Արցախի համար են լինելու, ծրագրեր, որոնք իրականացվում են Հայաստանում, կապ են ունենալու Արցախի հետ: Ընդհանրապես այս հանդիպման համար, շատ կարևոր և օգտակար մտքեր հնչեցին, որոնք կիրառություն կգտնեն մեր գործունեության ընթացքում»:

Ս. ԽԱՅԱՏՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ 2017-2018 ՈՒՍԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2017-2018 ուսումնական տարում շրջանում գործել է 16 միջնակարգ, 9 հիմնական դպրոց, մասնաճյուղեր՝ Հաղործի, Թաղասեռի միջնակարգ և Վարդաշատի, համաձայնորի, և հծաբերդի հիմնական դպրոցներին կից: Ուսումնական տարվա սկզբին շրջանում եղել է 2014 դպրոցական, ուսումնական տարվա 2002 աշակերտ: Միջնակարգ կրթության ատեստատ է ստացել 95 շրջանավարտ, հիմնական կրթության վկայական՝ 132:

Շրջանում գործել են երկու արտադպրոցական հիմնարկներ՝ «Հաղործի մանկական ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ՝ 366 աշակերտի ընդգրկմամբ, 30 խմբակ և «Հաղործի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ՝ 252 պատանիների և աղջիկների ընդգրկմամբ, 22 խմբակ:

Նախարարական խմբեր կան Հաղործի, Թաղասեռ, Քյուրաթաղ, Ալևադյուր և Այգեստան դպրոցներում:

Պետական մանկապարտեզներ են գործում Հաղործի, Ազոխ, Դրախտիկ, Առաքել համայնքներում: Գործում են նաև Հայ Ավետարանական և ՀՕՄ-ի «Սոսե» մանկապարտեզները: Տող գյուղի դպրոցի մասնաշենքում գործել է երաժշտական դպրոց, որտեղ ընդգրկված են Տողի և Ուխտաձորի ենթաշրջանների դպրոցների աշակերտները:

Սովորողների ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպվել են իրենց ուսումնական հաստատություններում, բացի 9-րդ դասարանի մաթեմատիկա առարկայից: 12-րդ դասարանի 95 աշակերտից 41-ը

հայտագրվել է միասնական քննություններին: Անբավարար են ստացել Հաղործի միջնակարգ դպրոցից մեկ աշակերտ՝ հայոց լեզվից, Մեծ Թաղերից վեց աշակերտ՝ հինգ առարկայից, Ազոխից՝ երեք աշակերտ, որից 2-ը՝ հայոց լեզվից, Տունու միջնակարգ դպրոցից՝ չորս աշակերտ, որից երեքը՝ հայոց լեզվից, Ալևադյուրի միջնակարգ դպրոցից՝ մեկ աշակերտ (երկու աշակերտից)՝ դարձյալ հայոց լեզվից, Ուխտաձորի միջնակարգ դպրոցից՝ մեկ աշակերտ, Դրախտիկի դպրոցից՝ չորս աշակերտ, որից երեքը՝ հայոց լեզվից: Միասնական քննություններին չեն մասնակցել Զրակուսի, Առաքելի, Մոխրեմեսի, Քյուրաթաղի միջնակարգ և հծաբերդի, Բանաձորի հիմնական դպրոցները:

Մարիամաձորի միջնակարգ (3 մասնակից), Տողի միջնակարգ (2), Թաղասեռի միջնակարգ (1) դպրոցներից անբավարար գնահատականներ չեն եղել:

Բարձր միավորներ են վաստակել հայոց լեզվից՝ Հաղործի, Մարիամաձորի, Մեծ Թաղերի, անգլերենից՝ Հաղործի, Տողի, Մեծ Թաղերի, Մարիամաձորի միջնակարգ դպրոցների աշակերտները: Մյուս առարկաներից՝ մաթեմատիկա, հայոց պատմություն, համաշխարհային պատմություն, բարձր միավորը խորհրդի Կարոյի միջնակարգ դպրոց: Հետևությունը՝ տեղերում՝ տնօրենների կողմից:

Միասնական քննություններին մասնակցած 41 աշակերտներն ընդհանուր հանձնել են 93 քննություն, որից 78-ը կամ 84%-ը գնահատվել է բավարար:

Առարկայական օլիմպիադաներ 222 դպրոցական 21 դպրոցներից մասնակցել է առարկայական օլիմպիադաների շրջանային փուլին: Հանրապետական փուլին 11 դպրոցներից մասնակցել է 35 աշակերտ կամ ընդհանուր մասնակիցների 15,8 %-ը: Հանրապետական փուլի 35 մասնակից աշակերտներից բարձր արդյունք է ցուցաբերել 3 աշակերտ և մասնակցել երևանում կայացած օլիմպիադայի եզրափակիչ փուլին, արժանացել են շնորհակալագրերի ու արժեքավոր նվերների (Մեծ Թաղերի մ/դ՝ Ավետիսյան Մարիա, Հաղործի մ/դ՝ Գրիգորյան Ռեզիա, Մարիամաձորի մ/դ՝ Դազարյան Արմեն):

Հաղործի միջնակարգ դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող 342 աշակերտից օլիմպիադայի շրջանային փուլին մասնակցել է 62-ը, հանրապետական փուլին՝ 11 աշակերտ, մրցանակային տեղ է գրավել ընդամենը մեկ հոգի:

Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող 155 աշակերտից շրջանային փուլին մասնակցել է 27-ը, հանրապետական փուլին՝ 5-ը, մրցանակային տեղ է գրավել 2- աշակերտ:

Ազոխի միջնակարգ դպրոցի 88 աշակերտից շրջանային փուլին մասնակցել է 20-ը, հանրապետական փուլին՝ 5-ը, մրցանակային տեղ չկա:

Տողի միջնակարգ դպրոցի 70 աշակերտից շրջանային փուլին մասնակցել է 16, հանրապետական փուլին՝ 1 աշակերտ, մրցանակային տեղ չկա:

Տունու միջնակարգ դպրոցի 73 սովորողից օլիմպիադային մասնակցել է 8 աշակերտ, հանրապետական փուլին՝ 2-ը, մրցանակային տեղ չկա:

Մարիամաձորի միջնակարգ դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող 38 աշակերտից օլիմպիադայի շրջանային փուլին մասնակցել է 12 աշակերտ, որից մրցանակային տեղ է գրավել 2, իսկ հանրապետական փուլին մասնակցել է 6 աշակերտ:

Դրախտիկի, Թաղասեռի, Առաքելուի միջնակարգ, Հակակվի հիմնական դպրոցի օլիմպիադայի շրջանային փուլի մասնակիցներից ոչ մեկը հանրապետական փուլ չի անցել:

Մոխրեմեսի միջնակարգ, Բանաձորի, Խանձաձորի, Հին Թաղերի հիմնական դպրոցներից շրջանային փուլին մասնակից չի եղել:

Այս ամենը մտածելու տեղից պիտի տա ինչպես շրջանային բաժնին, այնպես էլ դպրոցների տնօրինությանն ու ուսուցիչներին:

Ամունքի հանրապետական մանկապատանեկան 11-րդ հոբելյանական մրցույթ-փառատոն. այս տարի այն նվիրված էր հայ ժողովրդի բոլոր ժամանակների ազգային- ազատագրական պայքարին՝ Արցախյան շարժման 30-ամյակին: Հաղործի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտուհի Տատյանա Մարտիրոսյանը հանրապետական փուլի 1-ին տարիքային խմբում զբաղեցրել է 2-րդ մրցանակային տեղը, մասնակցել է նաև եզրափակիչ փուլին երևան քաղաքում և արժանացել գովասանագրի:

ՏԱՐԻՆԵՐ ԱՆՑ

ԽՏԱՑԱՆԻ ԿԱՐՈՑ

Հիսուն տարի առաջ՝ 1967-68 ուստարում, ԽՏԱՅԱՆԻ միջնակարգ դպրոցն ավարտած 44 շրջանավարտներիս համար կյանքի դռները լայնորեն բացվեցին, և ամեն մեկն ընտրեց կյանքի իր ճանապարհը՝ լի պատանեկան վառ երազներով, ապագայի հանդեպ ունեցած անսահման ու խոր հավատով: Ամեն մեկն ուներ նպատակն ու իր օրենքները, դրսևորում իր քմահաճ բնավորությունը, ու այդ դեպքում ոչինչ անել չէս կարող:

Ճակատագիրը, սակայն, երբեմն թելադրում էր իր օրենքները, դրսևորում իր քմահաճ բնավորությունը, ու այդ դեպքում ոչինչ անել չէս կարող: Մեկին ծայտաց բախտը, հաջողությունը բախեց դուռը, մյուսին բաժնի հասավ ծանր, փորձություններով լի ճանապարհը: Մեկը գոհ եղավ իր կյանքից, մյուսը Նոբելյան խոսքեր մտնեց: Ու այսպես ամեն մեկը հարթեց իր ուղին: Ոմանք ընտրեցին մանկավարժության բնագավառը, ոմանք՝ հասարակական կարգի պահպանության, ոմանք գիտության դռները ծեծեցին, ոմանք էլ նախընտրեցին գյուղատնտեսությունն ու թիվստը, կյանքի այլ բնագավառներ:

Որ օգոստոսի 18-ը մեզ համար դառնալու էր մեր կյանքի պատմության լուսավոր ու անմոռաց էջը, դրանում համոզված էինք: Ու բոլորիս թվում էր (հետո բոլորը հաստատեցին այդ փաստը), թե ամեն մեկս այդ օրը մի մտնում ու պատասխանատու քննություն էր հանձնելու, և հուզվում էինք դրա համար:



Հարազատ դպրոցի հին օրերի երգը...

Հիսուն տարվա հեռուներից որոշել էինք հավաքվել՝ հազեցնելու անհուն կարոտի ծրարված, միմյանց փոխանցելու այն քաղցր խոսքերը, այն զգացողությունը, որ պատանության տարիներին թերևս չհամարձակվեինք արտահայտել: Բոլորիս համակել էր նույն միտքը, ու ինչքան է փոխվել, կճանաչե՞նք իրար, կկարողանա՞նք արտահայտել իրար մտածածը այդ օրվա կարոտը, ու ինչ կարողանանք մեր տեղեկացել է այդ հանդիպման մասին, ու ինչ է բերել իր հետ իր անձնական կյանքից, ու ինչքանով է վայելել երջանկության իր բաժինը, ում է փորձություններ բերել կյանքում ճակատագիրը, ու ինչքանով է պարտավորված եղել այս հանդիպման համար: Միայն այս հարցերն էին, որ վերջին ամիսներին խել էին մեր հոգու անդրորում ու խաղաղությունը: Պատանեություն էինք արդեն, թե որքան տարբեր էին լինելու դեմքերիս արտահայտություններն այդ պահերին՝ ինչ-որ տեղ անորոշության, զարմացական, ինչ-որ տեղ էլ՝ հիացական ու բացականջական: Ու բոլորս շունչներս պահած՝ սպասում էինք այդ երանելի պահին:

Ուղիղ մեկ տարի առաջ էր, որ մեր համադասարանցի Միքայել Դանիելյանը գնալուց ինձ ու սասց. «Ի՛նչ ես մտածում, գիտե՛ս, որ 2018-ին լրանում է դպրոցն ավարտելու 50 տարին: Ի՛նչ ենք անելու, չտեղեկացնե՛ք մեր դասընկերներին՝ հավաքվե՛ք»: Պատասխանս միանշանակ «այո» էր: Հարցրի. «Ի՛նչ է ինձանից կախված», նա էլ թե՛ «Արիստիդեսի գոտի 1967-68 ուստարվա շրջանավարտների ցուցակը և մեկ օրինակը ինձ ուղարկիր»:

Ու սկսվեցին որոնումներն ու փնտրտուքը, որի համախորությունից երբեք չէինք տրտմունք, ավելին, մեծ սիրով էինք այն կատարում:

Գնալով պակասում էին ամիսները, և մտնում էր երանելի ու անչափ ցանկալի հանդիպման ամիսը, օրը, ժամը: Այդ ընթացքում մի քանի անգամ մենք հասցրինք հանդիպել, ստեղծել մի փոքրիկ հանձնախումբ՝ հինգ հոգուց բաղկացած (Դանիելյան Միքայել, Ղազարյան Սուրյան, Աղաբաբյան Էդուարդ, Հովսեփյան Լուսինա, Ղաիրյան Գեորգի Զանյուկ) և աշխատանքի բաժանում կատարել: Քառասներորս շրջանավարտների ցուցակը (ժամանակին «ա» և «բ» դասարաններ էին) մեջտեղ դրեցինք, ու յուրաքանչյուրս ստացավ իր առաջադրանքը՝ ում համար էր պատասխանատու:

Եվ ահա օգոստոսի 18-ն է: Նախորդող

գիշերը ոչ ոք չէր քնել: Բոլորն անհանգիստ ու անհամբեր էին դարձել, շտապում էին ժամ առաջ լինել հանդիպման վայրում: Իսկ հանդիպման վայրը ԽՏԱՅԱՆԻ միջնակարգ դպրոցն էր, որը, սակայն, այն ժամանակ գործող դպրոցի հրապարակն էր: Հեռավորությունը արգելեց չէր հանդիպել, որ օրը ու ցամաք հարթահարելով՝ այսօր ներկա գտնվեին այս հիշարժան արարողությունը: Հեռով հավաքվում էինք՝ մեկ-մեկ, երկու-երկու: Անհուն կարոտը մազնիսի պես քաշում էր բոլորիս: Մարդկային երևակայությունն անգոր է՝ նկարագրելու այն զգացողությունները, որ մենք դրսևորեցինք հանդիպման ժամանակ: Ողջագուրաբաններ, գրկախառնություններ, կարոտի համբույրներ, զարմացական ու հիացական հայացքներ ու ակնարկներ: Նայո՛ւմ-նայո՛ւմ էինք իրար ու չէինք կշտանում, անընդհատ գրկում էինք մեկս մեկու ու փորձում հիսուն տարում ամբարած կարոտը հազեցնել, բայց չէր ստացվում: Քաղցր ու նվիրական հուշերը հորդում էին բոլորիս շուրթերից: Պատմում էինք, պատմում, ու թվում էր՝ վերջ ու ավարտ չի լինելու: Դա խառցած մի կարոտ էր, որ մեր սիրտը ջերմությունից առատորեն հոսում էր մեր հոգիներեց:

բայանի անունով, որին ներկայիս տնօրեն Լ.Մոսիյանը սիրով արձագանքեց և հաջորդ օրն իսկ մանկատրոսի հաստատեց իրողությունը: Կարծես ինչ կահավորման պատասխանատվությունն իր ուսերին առավ Միքայել Դանիելյանը:

Մեր ծրագրի հաջորդ մասն անցկացրինք դպրոցի փառքի սրահում տեղադրված գոհվածների հուշատախտակի մոտ, գյուղի գերեզմանոցում՝ գոհվածների հուշահամալիրի, մեր համադասարանցիների և ուսուցիչների շիրիմներին ծաղիկներ խոնարհելով ու հարգանքի տուրք մատուցելով:

Եվ ամենասպասված պահը՝ մեր հանդիպման գագաթնակետը, որ շաղախված էր երգ ու պարով, ուրախ պատմություններով ու հայկական ավանդական կենացներով, կազմակերպեցինք մայրաքաղաքի հանդիսությունների սրահներից մեկում:

Ինչքան ճշմարիտ էր մեր ընկերներից մեկի՝ Վիլենի այն միտքը, թե «այս օրը կյանքիս ամենապայծառ ու լուսավոր օրն է», իսկ հաջորդ օրվա հավաքույթի ժամանակ էլ Էդուարդը մշտեց, որ դա մի բացառիկ երևույթ էր, որտեղ բոլորը հավաքվել էին՝ միմյանք իրենց սերն ու հոգու ջերմությունը, կարոտը փոխանցելու միմյանց. այստեղ ոչ ոք ոչ ոքի չէր նախանձում, միայն ու միայն շնայլ սեր ու հարգանք կար իրար հանդեպ: Հասմիկ Գրիգորյանն էլ յուրովի մեկնաբանեց միջոցառումը. «Մարդու կյանքում երջանիկ պահեր են համարվում հատուկներն օրեր՝ Առաջին զանգը, Վերջին զանգը, հարսանիքը, առաջին զավակի ծնունդը: Այսօրվա երջանկությունը վեր էր այդ բոլորից»:

Կյանքում այդքան անկեղծ ու անմիջական երևի չէին եղել, ինչպես այդ օրը: Հրավիրել էինք նաև մեր նախնին ուսուցիչներին, որ երբեք են մնացել: Ներկա էին բոլորիս սիրելի մանկավարժ Բահատուր Դավթյանը և անզերեմի ուսուցչուհի Նինա Թովմասյանը, որ մեր սովորելու տարիներին ընդամենը 3-4 տարով էր տարբերվում մեզանից:

Ինչ ուրախություն ու երանելի պահեր էին իշխում դա՛իծում՝ դժվար է պատկերացնել: Այս ամենից հետո միայն մի բան հասկացանք, որ 50 տարի անց կարելի է այդքան երջանկության պահեր պարզել միմյանց: Կարծում են, որ նրանք, ովքեր ինչ-որ պատճառով չէին ներկայացել այս հրաշք հեքիաթին, կյանքում շատ բան կորցրին:

Հոսում էր ժամանակը, բայց չէինք ուզում, որ ավարտվի այս երջանիկ հեքիաթը: Հենց այս հանգամանքը նկատի ուներ Միքայելը, որ առաջարկեց այլևս չհետաձգել հաջորդ հանդիպումը: Հանդիպելու ենք հինգ տարի անց՝ 2023 թվականին օգոստոսի 18-ին, հենց այս օրը՝ նշելու արդեն 55-ամյակը:

Մեկ օրը շատ քիչ ժամանակ էր մարելու այն անսահման կարոտի կրակը, որ հողեհել էր մեր հոգիները, և որոշեցինք հաջորդ օրը շարունակել ուրախությունը: Իհարկե, բոլորի համար շատ հաճելի էր առաջարկությունը, բայց ոչ հարմար, քանի որ մի մասն արդեն հաջորդ օրվա համար ուղևորության տոմսեր ուներ: Մնացողները շարունակեցին ուրախությունը՝ հիշատակելով բոլորի անունները:

Ավարտվեց հիշարժան մի միջոցառում ևս, որ դառնում է ավանդական: Միջոցառում, որ խոսում է հարազատ կրթօջախում դաստիարակված մի սերնդի մասին, որ իր հիշողության բոլոր ծալքերով կապված է նրան, և տարածությունն ու ժամանակը չեն խընդրոտում, որ նա իր երախտագիտությունն արտահայտի այդ օջախի ու նրա երախտավորների հանդեպ 50 տարի անց:

Ինչ-որ լավ բան անելու համար երբեք ու չի լինում:

Միտք ու բարությանը շրջապատեք իրար, մի՛ մոռացեք այն սուրբ վայրը, որտեղ կրթվել եք ու դաստիարակվել, և այն երանելի մարդկանց, որոնց շնորհիվ կյանքում գտել եք ձեր տեղը:

Մինչ նոր հանդիպում, իմ սիրելի համադասարանցիներ:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՃԱՆԱԳԱՐԶ ԴԵՊԻ ԿԱՏԱԿԱՏ ՀԱՆԳԻՍ

Օգոստոսի 14-ին Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցում կազմակերպված հրաժեշտի ցերեկույթը նվիրված էր դպրոցի տարրական օղակի մեթոդավար ման ղեկավար, վաստակաշատ դասվար Էլզա Խաչատրյանին:

«Դպրոցյան մկրտությունը կարգազուրկ կրող միջոցառումը կազմակերպվել էր ուսուցչական կոլեկտիվի համատեղ նիւժերով, որի ընթացքում գնահատվեց և արժևորվեց շուրջ 47 տարվա մանկավարժական գործունեություն ծավալած ուսուցչի անձնուրաց և հայրենասեր գործը, ուսուցիչ, որն իր կյանքի լավագույն տարիները մկրաբերել է կրթության սուր գործին՝ մատաղ սերնդին տալով հայեցի դաստիարակություն, սերմանելով սեր առ հայրենիք, ընտանիք ու կրթություն:



Միջոցառմանը ներկա էին Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Զորիկ Դուլյանը, գործընկերներ, դպրոցի նախնին՝ արդեն վաստակած հանգստի անցած ուսուցիչներ, Է. Խաչատրյանի հարազատներ և աշակերտներ:

Էլզա Խաչատրյանը ծնվել է 1954թ. հոկտեմբերի 30-ին Արթուրյանական ՍՄՀ ժողովրդի շրջանի Թաղաքենո գյուղում: 1961թ. համախել է առաջին դասարան: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել են Մարտունու քաղաք: 1971թ. ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի Մանկավարժություն և տարրական մեթոդիկա ֆակուլտետի հեռակա բաժինը, որն ավարտել է 1975-ին: Նույն տարում աշխատանքի է անցել Մարտունու միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջրկանակցի, այնուհետև՝ երկտարային խմբի դաստիարակ: 1982-ից մինչև 2018 թվականն աշխատել է որպես դասվար: 2007թ. մասնակցել է «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և հաղթող ճանաչվել:

Արդեն ավանդույթ դարձած հրաժեշտի ցերեկույթի ընթացքում օրվա հերոսի սաները երախտագիտության սրտառու խոսքեր հղեցին իրենց կրթած ու դաստիարակած, մայրական ջերմությամբ համակած սիրելի ուսուցչուհուն՝ սասմունքի, երգ ու պարի տեսքով: Ինչպես փաստեցին ներկաները, կոչմանը հավասարին ուսուցչուհին միշտ էլ աչքի է ընկել գիտելիքի հարուստ պաշարով, դասավանդման ուրույն մեթոդներով, վարպետությամբ, ստեղծագործական ունակություններով ու հնարներով:

Միջոցառման ընթացքում ԿՄ Բաժնի վարիչ Զ.Դուլյանը շնորհակալություն հայտնեց Է.Խաչատրյանին՝ կրթության ոլորտում ունեցած ավանդի համար և շրջվարչակազմի ղեկավար Միեր Օհանյանի կողմից հանձնված շնորհակալագիր: Բարենաղթանքի ու հրաժեշտի խոսքերով հանդես եկան դպրոցի նախնին տնօրեն Վալերիկ Հայրապետյանը, գործընկերներ Նարինե Ավանեսյանը, Էմմա Բաբայանը, Սուսաննա Սարգսյանը, Սուսաննա Թևոսյանը, Վալերիկ Շիրինյանը, դպրոցի ծնողկոմիտեի նախագահ Է.Խաչատրյանի նախնին աշակերտուհի Դեյանե Հակոբյանը, ծնող Կարեն Գրիգորյանը, Է.Խաչատրյանի թոռ Զանա Գաբրիելյանը: Հնչած ելույթներում Է.Խաչատրյանը որակյեց որպես լավ գործընկեր, գործին մկրայլ ու պատասխանատու ուսուցիչ, հոգատար մայր, քնքռել ու բարի տատիկ: «Դժվար է հարազատ կոլեկտիվի ու աշխատանքից հեռանալը, բայց երբ գիտակցում ես, որ թեզ փոխարինելու է այն երիտասարդ ուսուցիչը, ում դու ես սովորեցրել, ոգևորվում ես», - իր խոսքում նշեց Վ.Հայրապետյանը: Մաղթեցին, որ վաստակաշատ դասվարը միշտ հավատարիմ մնա ուսուցչի վեհ կոչմանը և երջանիկ ու առողջ վայելի վաստակած հանգիստը:

Միջոցառման վերջում Է.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց գործընկերներին ու սաներին՝ ման գեղեցիկ միջոցառում կազմակերպելու համար:

- Իմ կյանքի ուղին շատ բարդ է եղել, բայց շնորհիվ իմ կամքի ու ժի, հարթահարել են բոլոր դժվարությունները: Այսօր փակում են իմ կյանքի ամենամկրակական էջը և, շնորհիվ նույն կամքի ու ժի, կվայելեն վաստակած հանգիստը: Ուրախ եմ, որ կրթել են սերունդների, որոնք այսօր տարբեր բնագավառներում նպաստում են հայրենի երկրի բարգավաճմանը, - ասաց Էլզա Խաչատրյանը:

Նա հիշատակեց նաև իր այն հերոս սաների անունները, ովքեր սեփական կյանքը դրեցին հայրենիքի փրկության գոհասերտանին: Առանձնակի ոգևորությամբ խոսեց այն աշակերտների մասին, ովքեր այսօր հսկում են մեր անառիկ սահմանները և ապահովում մեր խաղաղ գիշերները:

Դժվար ու պատասխանատու է ուսուցչի գործը, առավել ևս՝ առաջին ուսուցչի, քանի որ հենց առաջին ուսուցիչն է գտնում սաների հոգու բաճակին, դնում ապագա արժանավոր քաղաքացու ձևավորման հիմքերը:

Ամուշ ԱՍՐԻԲԵԿԵԱՅԱՆ
Ք. Մարտունի

ԱՅՈՏ ԱՐԻՎԱՅԱՆ-100

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ XX ԴԱՐԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ



Աշոտ Արսենի Աբրահամյանը (1918-1985) ծնվել է Աևանի մոտակա Լեռնահովտային Գեղամավան գյուղում: Փոքրուց Յրազգանի դալարագեղ ափին գառներ ու հորթեր է պահել, հիացել բնության սքանչելի հրաշալիքներով, օգնել իրենց տնտեսությանը: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում, միջին դասարաններն ավարտել է շրջանային դպրոցում, միջնակարգը՝ Երևանում: 1937թ. ուսուցչական աշխատանքի է անցել Յրազգանի (Ախտա) շրջանային գյուղերում՝ դասավանդելով հայոց լեզու և գրականություն: Եղել է նաև ուսնավարի, տնօրենի պաշտոններում: Երիտասարդ հասակում սքանչացել է սրտի թագուհու հմայքներով (1940թ. երկու տասնյակից ավելի բանաստեղծություններ են պահպանվում՝ զուգակցված հայրենի սքանչելի բնաշխարհին ու հայրենիքին): Մեծ լեզվաբան Աշոտ Աբրահամյանը բուհն ավարտել է հեռակա՝ աչքի ընկնելով իր արտակարգ մտածողությանը ու քննադատական մտքով: 1944-47 թթ. նույն ձևով շարունակել է ասպիրանտուրան, իսկ 1948թ. պաշտպանել թեկնածուականը: 1949թ. ստացել է դոցենտի կոչում: 1943-44-ից դասախոսական աշխատանքի է անցել Կ. Մարտիկոսյանի (չորս դստեր հայր էր): 1950-59 թթ. աշխատել է նաև գիտությունների ակադեմիայում ու հայոց լեզվի սեկտորի վարիչ էր: Այնուհետև Խ. Աբովյանի անվան ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն էր: 1963թ. անվանի գիտնականը պաշտպանել է դոկտորականը բայագիտությունից: Նա հիմնականում զբաղվել է հայոց լեզվի պատմական քերականության, գրաբարի և բայագիտական հարցերով ու, որպես խորհրդային մասնագետ, ուշադրության կենտրոնում էր:

Մեծանուն Ա. Աբրահամյանը «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» գրքում (Ե., 1953թ.) (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ) բազմակողմանի ու լուրջ ուսումնասիրել է դերբայները: Գիրքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում V դարից առ իր պարս ժամանակահատվածն է քննարկել դերբայները, որպես բայ խոսքի մասի բաղադրիչ: II մասում քննարկել է հնագույն ձևերը, հատկապես -ում, -լիս, -ած (-ուած) դրսևորումները մատենագիտությունում և դրանց զարգացումն ու արդի վիճակը: Եր. Աղայանի անվանած մակբայական դերբայը կոչել է ընթացական (-լիս. այդ դերբայն ուներ անկատարի II-ական ձև, իսկ հիմա՝ համակատար, զուգընթացական անունները): III գլխում դերբայների ձևաբանական դերի մանրագրին ուսումնասիրությունն է փաստական հարուստ նյութերի հիման վրա (այս գրքի առաջին գիտական վերլուծությունը Եր. Աղայանի է կատարել «Հայ լեզվաբանության պատմություն», հ. II-ում, Ե., 1962 թ., էջ 376-379): Աշոտ Աբրահամյանի հաջորդ հանրահայտ աշխատանքը, բուհական դասագրքի արժեքով էր, դա հանրահայտ «Գրաբարի ձեռնարկ»-ն է (Ե., 1952 և հետագա վերահրատարակություններ), որտեղ շատ հաջող համակարգված է ներկայացված «Ձևաբանություն» բաժինը (գրքին կցված են գործնականների համար հաջող ընտրված բնագրեր, ծանոթագրություններ ու բառարան): Այդ դասագրքի բոլոր հրատարակություններն ուսանողների համար առաջնակարգ ուսումնասիրության նյութ էին: Հայերենին անվանի նվիրյալի գիտական աշխատությունների փառքը «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունն է (Ե., հ. I, 1963թ.), որով հեղինակին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Այս կապակցությամբ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բոգոսյան Վերդյանը ընդել է «Այս աշխատությունն աչքի է ընկնում հայ դասական լեզվաբանության և արդի լեզվաբանական մտքի նվաճումների ստեղծագործական համադրությամբ ու գիտական նորություններով: Բավական է միայն վերցնել հայերենի բայի ծագման ու կազմավորման և բայական սեռին հատկացված բաժինները, որպեսզի անմիջապես զգացվեն գիտական խիզախումը, հեղինակի պրպտող միտքն ու գիտական հայտնագործությունների անակնկալ հաճույքը: Ոչ միայն հայ, այլև ընդհանուր լեզվաբանության համար մեծ արժեք են ներկայացնում հայերենում բայական կրկնաձև-

նության, նրա դրսևորումների ու պատճառների քննությունը» (Ա.Ա.Ա., Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր, Գիտ., Ե., 2001 թ., էջ 19):

Մեծանուն լեզվաբան Ա. Աբրահամյանի աչքն անգամ նկատել էր դպրոցական տարրական կրթության դասագրքում մեծ ճանաչում ազդավոր հանրահայտ «Խոզն ու ազգավը» չափածո առակի հանգի գոհ բայական անհարկի -վ-ն՝ Խոզն ազահ ու անհագ այնքան կարծի գիտվեց, որ ցած ընկավ ու փռվեց (գիտել բայը ներգործական սեռի է): Այս աշխատությունում շեշտված է այդ բայի սխալ գործածության ձևն ու դրա ճանաչում գտնելը լայն հասարակության շրջանակներում (արհամարհական, անարգական ոճի խոսակցական այս բայը Գր. Աճառյանի «գալ-առական բառարան»-ում տեղ ունի բարբառային արտահայտության ձևով՝ Աշո բարբառ (ներգործածել)՝ գիտել, Վանի բարբառ (կրավորած և -կ ածանցով)՝ գիտելի, էջ 321 (Թիֆլիս, 1913թ.) նաև գիտել// -վել ձևով, որպես արևելահայերեն խոսակցական բառ Գ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարանում» է հիշված, բայց -վ-ի անհարկի լինելը նշված չէ, Ե., 1973 թ., էջ 316) և այլն:

Իր ժամանակին մեծ ճանաչում ունեցած լավագույն լեզվաբան Ա. Աբրահամյանը հեղինակ է նաև բազմաթիվ արժեքավոր գիտական հոդվածների, որտեղ քննարկված են պատմական հնչյունափոխության, բայական կրկնաձևության, ժամանակակից հայերենի կրկնավոր բայերի, փոխառությունների հետ կապված բայակազմական մի քանի իրողություններ և այլ հարցեր: Նա գրաբարից ժամանակակից հայերենով թարգմանել է նաև Եզնիկ Կողբացու մեծարժեք «Եղծ աղանդոց»-ը համապատասխան հմուտ ծանոթագրություններով և գիտական առաջաբանով: Հաջորդ թարգմանած գործը Ստեփանոս Օրբելյանի (անհայտ-1305) Սյունիքի պատմությունն է՝ էլի համապատասխան առաջաբանով (լատիներեն, ֆրանսերեն, ռուսերեն, վրացերեն թարգմանություններին էլ է անդրադարձել): Երախտաշատ հեղինակը գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ էր, ղեկավարել է օժանդակել է բազմաթիվ սկսնակ ու որոշ ծառայություն ունեցած լեզվաբանների գիտական աշխատությունների իրացմանն ու հեղինակների համապատասխան գիտական աստիճանին հասնելուն: Նա գիտական բնագավառի վաստակավոր գործիչ էր և ուներ արտակարգ հիշողություն (ան-

գամ հիշում էր որ ատենախոս (դիսերտացի) երբ և ինչ թեմա էր ստացել ու ինչ գործ է կատարել այդ կապակցությամբ կամ չի կատարել երեք տարվա ընթացքում, զլացողների կամ ինչ-որ այլ պատճառներով չկատարողների գրկել է թեմայից և տվել մեկ այլի, հենց մենք (Ս.Մ.) զգացել ենք մեր մաշկի վրա այդ անաչառ վերաբերմունքը (հիվանդանոցներում շատ էի եղել ու երեք տարում աշխատանքի և ընտանեկան պարտականությունների հետ չէի հասցրել, աղեկտուր արցունքներս իբր չնկատելով, մեղմ ու հոգատարությամբ ասաց. «Չովի. Շիրազի պոեմների վրա աշխատիր»: Այդ ժամանակ «Գրական թերթ»-ում ընթերցել էի մեծանուն բանաստեղծի «խաղաղություն ամենեցուն» պոեմից հատված և հիացական մամուլ գրել հեղինակին՝ բառաստեղծական անկրկնելի տաղանդի վերաբերյալ, հատկապես հատուկ անունից բայը՝ մասիսվել, մաշտոցվել՝ Սա մշեցի, լուսահոգի Ա. Աբրահամյանն իսկույն հանգիստ ասաց. «Քո թեման պատրաստ է, միայն արագ աշխատիր, կանացի գործերից մի քիչ հեռու մնա» և տխրամած աչքերով նայեց անորոշության: Ցավոք, անգութ մահը չթողեց նա տեսներ արցախյան շիրազապաշտի գիտական հաջողությունը, որն արթեջանապատակ Արցախում մեծ հանգումություն է՝ միշտ ՊԱԿ-ի հսկողության տակ էր): Մեծ գիտնականին բացարձակ ճերմակահեր էի տեսել: Ասում էին, որ թույլ սովորող մի ուսանողուհու դիտողություն էր արել երկրորդ անգամ քննությունից անբավարար ստանալու համար (երրորդի անհաջողությունը դուրս մնալու վտանգ է տեսել): Ուսանողուհին լուռ դուրս էր եկել ու գնացել Յրազգանի կամրջից իրեն նետել և հոգին ավանդել, երբ այդ լուրը փոխանցել էին Ա. Աբրահամյանին, գիշերը մազերը լրիվ ճերմակել էին քնած ժամանակ՝ մտքում եղած ահավոր պարունների պատճառով (անգիջում էր մայրենիի նկատմամբ անտարբեր սովորողների նկատմամբ, միայն վերինի, հատկապես ՊԱԿ-ի նկատմամբ էր խեղճանում, որովհետև դրա դառը պատմությունը հոյակապ էր հիշում...):

Մեծանուն հեղինակի ծննդյան հարյուրամյակն է: Հայ լեզվաբանության պատմությունում միշտ լավով կհիշվի մեծավաստակ Աշոտ Աբրահամյանը:

Սիլվա ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրԴՅ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ

ԶԻՆՎՈՐՅԱԼ ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳՅԱՆԻ «ԴԱՐՎԵՐՋԻ ՀԱՅՐ» ՎԵՊՈՒՄ

7 Երգախոսի շարժման մասնակից ֆիդայիները՝ նորոգյալ գինյալները, հայ ժողովրդական եպոսի հերոսների շառավիղներն են, նրանց նման քաջ ու բարի, խաղաղասեր, վեհանձն ու արդարադատ: Այդ ֆիդայիներից մեկն է Արամազդի կրտսեր որդին՝ Արմենը, որի մեջ խտացված են հայ ողջախոսի երիտասարդի, քաջ ազատամարտիկի, հմուտ հրամանատարի, հնազանդ որդու և կոզատար ամուսնու գծերը: Վեպում տրվել է Արմենի և Ջարուհու սիրո պատմությունը, որը գեղեցիկ է, յուրօրինակ և բացահայտում է կողմերից յուրաքանչյուրին որպես ազնիվ, հավատարիմ և անկեղծ սիրահար, մարդ՝ իր երկիրը սիրող, ազնիվ քաղաքացի:

Արմենը թրծվում է մարտի բոցերում: Նա մեկն էր այն մարտիկներից, ովքեր տարերայնորեն, բայց համոզված կռվեցին՝ դառնալով նորաստեղծ բանակի միջուկը: Ջուրի հրամանատար Արմենը ստիպված էր շատ բան ինքնուրույն սովորել: Նրան սատարում, խորհուրդներով օգնում էր հոր ընկերը՝ փոխգնդապետ Վանուցը, որն ընթերցողին ներկայանում է որպես ուժեղ բնավորությամբ մի խստապահանջ զորական, ում համար թանկ է ու սրբատուր Արցախի յուրաքանչյուր թիզ հողը: Վանուցը ուշադիր է և հոգատար իր մարտիկներից ամեն մեկի նկատմամբ: Հանդիպելով ազգերի խուժանի կատարած անգթություններին, դիմում է Արմենին հետևյալ խոսքով, որպեսզի ոգեշնչի նրան և ցույց տա նաև թշնամու չնչնությունը: «Հիշե՛ք Անդրանիկի հաղթանակները, հիշե՛ք Սարգսրապետը, Բաշ Ապարանը՝ Ղարաբաղի խառն, Հասան Ղալան, Շարուրը և այլն, և այլն: Հիշե՛ք Անդրանիկի թևավոր խոսքը թուրք ռազմիկների

մասին. «Նրանք արդեն հերոսաբար են մարտնչում օրորոցների դեմ: Եղա՛վ...»):

Ընթերցողն անցնում է Վանուցի անցած ճանապարհով, ցույց տալիս նրա քաղաքական և մարտական կրփավածությունը: Փոխգնդապետ քաջ հրամանատար է, կայուն բնավորությամբ օժտված հայորդի, դրա հետ մեկտեղ՝ մարդ: Պատերազմական թեժ գործողությունների մեջ, այնուամենայնիվ, նա չի կարողանում անտարբեր լինել ազատամարտիկների հոգեկան աշխարհի, անձնական կյանքի նկատմամբ: Նա վաղուց կարող էր խաղաղ ու հանգիստ կյանքին, ընտանեկան երանավետ անդորրին, բայց հայրենիքի կանչով անձնուրացորեն կատարում է իր պարտքն այնպես, որ ընթերցողը համոզվում է, որ նրա գործերի գործը Արցախն ազատագրելն է: Հրամանատարն ու մարդը ներդաշնակվում են Վանուցի մոտ, լրացնում իրար՝ ամբողջացնելով կերպարը:

Կենցաղային-ընտանեկան սյուժետային գործողություններում սկզբում առաջին պլանում էր Ջարուհի-Հարություն-Արմեն հոգեբանական հանգույցը: Հետո առաջին պլան է մղվում ավագ որդու՝ Ռուբենի կերպարը, որին հեղինակը ներքաշում է սիրային այլ հանգույցի ոլորտը: Նրան սիրում է զոհված ազատամարտիկի ցածր աղբյուր՝ Հասմիկը, որին տեսնում է և ուզում է տիրանալ Վիուլը՝ դավերով ու բանասարկություններով: Հասմիկն անկեղծորեն սիրում է Ռուբենին և չի ընդունում Վիուլի սիրահետումները: Սարգսյանն անակնկալ ձևով է լուծում սիրավեպը. ինչպես կյանքն է բարդ ու առեղծվածային, այդպես էլ Հասմիկի հոգեկան աշխարհում են կատարվում հանկարծակի փոփոխություններ, և նա ընդունում է Վիուլի սերն

ու նրա հետ հեռանում քաղաքից: Գուցե նա համոզվում է, որ Ռուբենի ընտանիքն անառիկ ամրոց է, իսկ իր սերը՝ ժամանակավոր, և նախընտրում է սեփական ընտանիքը կազմել: Կանցի բնագրով երկն ու հասկանում է, որ զուր են իր ջանքերը՝ լիովին տիրանալ Ռուբենին, դրա համար վերջնականապես ընտրում է Վիուլին:

«Նա, որ ապրել էր իր լիարժեք աշխարհիկ կյանքով, - գրում է Ս. Սարգսյանը, - թե անձնական և թե հասարակական, ճանաչված մտավորական էր, գործիչ և գրող-հրապարակախոս, այժմ, ահա, կաթվածահար գամվել էր անկողնուն՝ կյանքի ու մահվան վճռին հանձնելով իր գոյության ողբերգական ժամանակը: Եվ սակայն անխաբար է մնում բանականությունը, որ նրան կապում է կյանքի հոսանքին՝ ընկալելու իրադարձությունների ընթացքը և որոնելու ճշմարտությունը անցյալի ու ներկայի զուգահեռներում»:

Դարավերջի հայը փլուզված հայրենիքի խորհրդանշանն է, հայ, որը հավատացել է խորհրդային իշխանությանը, հպարտությամբ կրել կուսակցական տոմսը, լծվել է ծուլվել այդ երկրի դժվարին պատմությանը: Դարավերջի քարծուկեղջ հայերով իր վաստակին՝ Արամազդ Արամյանը միանգամայն հպարտորեն է ներկայացրել ժամանակի ահեղ դատաստանին՝ ապացուցելով, որ իզուր չեն անցել ապրած տարիները՝ միշտ ունկնդիր լինելով պատմության զարգացման կենդանի զարկերակի և վերարտադրելով նրա հեքն ու թրթռները:

Վիպագիր Սարգսյանը յուրահատուկ ձև է ընտրել՝ վեպի վերջում ներկայացնելով դարավերջի հայի մտորումները՝ հարցազրույցի տես-

քով: Ամերիկացի թղթակից միստր Սթրոնի այն հարցին, թե ինչպես կընդունեք այսօրվա հային, Արամազդը պատասխանում է. «Հայն այսօր ինքնուրույն քայլելու մանկական երազանք ունի, որը, ընկնելով, բարձրանալով, երբեմն անկնամն ցավից տնքալով, հաճախ հողին անուր կանգնելուց ուրախացած՝ կատարում է հետագա ավելի հաստատ քայլեր: Հայն ունի Աստծուց տրված և Աստծուն բնորոշ հարություն ամենուրեք հանձնարը: Հարկադրական վայրէջք, տառապալից ջանք՝ դժոխքը դրախտի վերածելու և դրախտն ու դժոխքը հավասարապես բնակելի տարածք դարձնելու անհնարին հնար: Ի վերջո, խորագնաց արմատներ, իսկ ճյուղերով՝ այլոց տնամերձների ցանկալի վարձակալ՝ անորոշ ժամանակով»:

«Դարավերջի հայը» վեպը ցույց է տվել, որ Սարգսյանի հուշերի թաքույցներում պահված էին ներանձնական սյուժեներ, որն էլ հեղինակը վարպետորեն միահյուսել է հայ քաղաքական և համազգային պայքարի հետ: «Նա պարզապես չէր կարող լրիվ չապրել իր Հայրենիքի պատմությունը, իր և մեր կենսագրությունը, այն երկրայինն ու տիեզերականը, որ իրականում բոլորին է, բայց քչերն են հասու լինում այդ ժամանակաշրջանի պարտքին ու պատասխանատվությանը: Իսկ հասու եղածներից քչերն են կարողանում այնքան ուժ ու զորություն գտնել, որ մինչև վերջ տանեն այդ ծանրագույն ու դժվար խաչը: Սկրտիչ Սարգսյանը, հիրավի, մեկն էր այդ քչերից», - գրում է Ներսես Աթաբեկյանը

Սիրուն ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ
ԱրԴՅ դոցենտ, բ.գ.թ

ՃՆՈՐԱԿՆԵՐ

ԳԻՐՔ ԶԳԱՑՄՈՒՆՔԻ ՈՒ ԽՈՐՀԻ ՊԱՏԿԵՐԱՆԱՄԱԿԱՐԳՈՎ



Ամառը Շուշիի մշակութային կյանքը լցվում է նաև Կամիլա-Ջաքար Քեշիշյան ընտանիքի ներկայությամբ: Արվեստագետ ամուսինները բանուկ են պահում Լիբանան-Շուշի ճանապարհը: Նրանց ամեն այցելությունը կատարյալ մշակույթի հետ հանդիպման հիասքանչ պահեր են Արցախի արվեստասեր հասարակության համար:

մի կողմից Մայր Հայաստանն է, մյուս կողմից՝ Սփյուռքը ու նաև Արցախը, որի գեղարվեստական պատկերը «15 ամառ Շուշիում» շարքն է: Կամիլայի «Ծաղկած ցավ» ժողովածուն պոեզիայի արտահայտչամիջոցների բարձր և անսովոր մի համադրությամբ է, որին, անշուշտ, անդրադառնալու են լեզվագետ-բանասերները»,-ի մասնավորի ասաց բանախոսը:

Իր խոսքն ասաց ԱՀ գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Ավելորդ չհամարեմք նշել, որ նա Քեշիշյան զույգի քավորն է: Մի քանի տարի առաջ Շուշիում տեղի է ունեցել նրանց ինքնատիպ հարսանյաց հանդեսը: Երաժիշտներն էլ իրենք՝ հարսն ու փեսան էին՝ դաշնամուրով ու շվիով, երգիչները՝ «Վարանդա» երգչախմբի անդամները, մասնակիցները՝ գրողներ, արվեստագետներ:

երկյուղածություն: Այստեղ բանաստեղծության հավատամք կա: Կամիլայի հավատամքը հետևյալն է. «Ես ամեն օր գնում եմ բանաստեղծության մոտ՝ հաղորդություն ստանալու»: Այդպես եկեղեցի են գնում, հաղորդություն ստանում են և այդպես հոգին ազատում են ծանր ցավից, որովհետև ցավի ծաղկունը նաև ազատվելու ուղին ունի իր մեջ:

Ցավի ծաղկունն էս չէի պատկերացնում: Ընդհակառակ էմ, որ Կամիլայի միջոցով էս հասկացա, որ ցավը նույնպես ծաղկուն է»: Գրականագետը, ի դեմս Կամիլայի, տեսնում է մեր ժամանակի դասական բանաստեղծի:

Լիբանանահայ գրականագետ Արմեն Յուրենշյանի խոսքով՝ Կամիլայի բանաստեղծությունը հոգու ճիչ է:

Բանաստեղծ Գագիկ Դավթյանը հետևյալ դիտարկումն արեց. «Կամիլայի մուտքը զուգորդվեց մի ժամանակաշրջանի հետ, երբ ընթերցողը սկսեց հեռանալ գրքից, գրականությունից և հատկապես պոեզիայից: Դրանում իրենց մեղքի բաժինն ունեին իրենք՝ նորօրյա գրիչ բռնողները: Նրանցից շատերն օրիգինալ, ազատամիտ երևալու մարմաջով արհամարհեցին դարերի քննություն բռնած արժեքները՝ գրականությունը ներմուծելով բանաստեղծական ռաբիբը, շինծուն, ակնթարթի գոյության դատապարտված օճառի պղպաղակներ... Ասել են մի անգամ և ուզում են կրկնել վերստին՝ ավելի լավ է չգրել ոչինչ, քան գրել ոչինչ: Ահա այս «ոչնչագրության» ժամանակներին զուգորդվեց Կամիլայի գրական մուտքը, և

բնութագրմամբ՝ այն «Լուսինան ճիչ է՝ նոտագրուած բառերով»:

«Ժողովածուում զարկերակի պես տրոփում են մեր դարի տագնապները և այդ տագնապներից պոկված ու ազատված մարդ-թռչունի անսահմ ճիչը: Այդպես ճչում է մայրը, երբ երկունքի ցավի մեջ զավակ է լույս բերում («Վերջին ցալը նման է ծննդի ցալին, Որ ճեղքում է Անսահմանութեան Անմահութիւնը»), այդպես ճչում է մարդը, երբ գահավիժում է անդունդը կամ երբ հասնում է երազանքի գագաթնակետին...»:

Գրքում տեղ են գտել մի շարք գրողների գնահատականները բանաստեղծուհուն: Ներկայացնենք մի քանիսը:

«Կամիլան հարուստ ներաշխարհ ունեցող, բնածին, ազնվականութամբ օժտուած մտաւորական է, մի տեսակ, որը խիստ պակասում է մեր «գունագեղ» գրական հասարակութեան մեջ: Նրա բանաստեղծութիւններում հաճելիօրէն միահիւսուած են պոեզիան եւ երաժշտութիւնը, իսկ կանացի անշփոթելի բնագոյր օգնում է նրանց թափանցել մարդկային հոգու անշօշափելի խորքերը» (Յովհաննէս Գրիգորեան):

«Շնորհաշատ է Կամիլան, բառի տեղն ու արժէքը իմացող» (Սիլվա Կապուտիկեան):

«Կամիլայի գրչին տակ Հայոց լեզուի բառերը կը դառնան աւելի իմաստալից եւ արծաթահունչ: Մեր գործը իրաւ բանաստեղծուհիի մը հետ է:

«Ողջո՛յն, բառերը բեռեզով զգեստաւորող հայ բանաստեղծուհիին...» (Թորոս Թորանեան)

«Կամիլան հայ մարդուն ազգային ու համամարդկային հարցերով տագնապող, տառապող ու երազող գերզգայուն հայ բանաստեղծուհի է, որ իր համապարփակ հայեացքով կը գրկէ ողջ հայ աշխարհը եւ իր սրտին թելերով եօքը սար ու ձոր անցնելով՝ կը հնչեցնէ իր արեան հովուական սրինգը» (Սարգիս Կիրակոսեան):

«Ազնուագոր բանաստեղծուհի է Կամիլան՝ հարուստ հոգեմտային աշխարհով: Նա իւրովի է ընկալում իրականութիւնը, իր ապրած ժամանակը եւ նոյնքան ինքնատիպօրէն արտացոլում է այն իր բանաստեղծութեան մեջ» (Լիւիլիզ Դուրեան):

«Կամիլան իր բանաստեղծական քնարով միջնադարի մեր տաղերը բերում ու կապում է նոր ժամանակների գրականութեան հետ: Երբ նայում են Կամիլային, միայն այբերս չեն, որ մասնակցում են տեսողութեանս...»

Շնորհակալ ենք քեզ, Կամիլա, որ գալիս ես ու հայեացքը թողնում ես Արցախի սարերի, ջրերի, ծաղիկների վրայ, յետոյ մենք այդ տեղերից բանաստեղծութիւններ ենք հաւաքում բառ-բառ, բուն-բուն... (Վարդան Հակոբեան):

Շնորհանդեսին իրենց տպավորությունները կիսեցին նաև բանաստեղծներ Ռոբերտ Եսայանը, Նորել Գասպարյանը, Ծովինար Բաղդասարյանը:

Երեկոն զուգահեռվում էր Կամիլայի և Ջաքարի նվագով: Կամիլան, որպես դաշնակահար, ամուսնու՝ շվիահար, խմբավար Ջաքար Քեշիշյանի հետ ներկայացրեց Ռոբերտ Պետրոսյանի՝ Դաշնամուրի և շվիի համար գրած կոնցերտը, որ, ինչպես Ջաքար Քեշիշյանը պատմեց, ստեղծվել է մի քանի տասնամյակ առաջ՝ հատուկ իր հորդորով: Արցախում այն հնչեց առաջին անգամ:

Շնորհանդեսն ավարտվեց գինեծոնով: Կամիլայի գրչընկերներն ու ցանկացողներն իրենց մաղթանքները թողեցին գրքի էջերում: Երեկոյի մասնակիցները հեղինակի մակագրությամբ ստացան «Ծաղկած ցավ» գիրքը:

Ս. ՉԱԲՐԻԵԼՅԱՆ



«Տարիներ առաջ Շուշիում երկու աղավնի են բաց թողել: Նրանց հետևից երկար նայել ենք Ջաքարի և Կամիլայի հետ: Ես մտածեցի, որ այդ աղավնիները այլևս ետ չեն դառնա, բայց հետո ամեն տարվա ամռանը Ջաքարի և Կամիլայի Շուշի այցով պայմանավորված՝ ես այդ զույգ աղավնիները տեսնում եմ: Հետո նրանց միացավ նաև Վահագնը (որդին-խմբ.): Երեք աղավնի, հետո ես տեսա, որ Կամիլան գալիս է գրքերով, որոնք նույնպես աղավնիներ են: Աղավնի է նաև այս գիրքը, որում նա ներկայացրեց մեր ցավի ծաղիկները: Սա խոսում է այն մասին, որ ճշմարիտ ակունքից է գալիս Կամիլայի բանաստեղծությունը, այլապես ինչո՞ւ պիտի ծաղիկը լինի ցավի: Դա ցավի աշխարհագրությունն է, ցավի քարտեզը, որը բերում է դեպի հիմնավորց հայոց հողը՝ Արցախը և մեր պատմական Շուշին: Շուշին, որի մշակութային կյանքում, կարելի է ասել, ամենահետաքրքիր դեմքերից են Ջաքարն ու Կամիլան»,- ասաց Վ. Հակոբյանը:

Երեկոյին ցուցադրվեցին Երևանում տեղի ունեցած շնորհանդեսի տեսաձայնագրությունից հատվածներ, Կամիլայի բնորոշմամբ՝ ի նշան Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության:

Գրականագետ Սերժ Սրապիոնյանը ոգևորված էր. «Ես չեմ պատկանում այն գրականագետների թվին, որոնք հոգեհանգիստ են կարդում ժամանակակից հայ գրականության համար: Այնուամենայնիվ, ուզում եմ շեշտել, որ այս գիրքը էական տարբերվում է շուշիական հեղեղած գրական միջակայություններից:

Այստեղ բանաստեղծուհին է, այստեղ բանաստեղծի ներքին ցավն է, այստեղ բանաստեղծի մտահոգությունն է, ուրախությունը և ամեն ինչ զարմանալի արված: Այստեղ կա բանաստեղծության նկատմամբ սրբազան



ի պատիվ իրեն՝ պետք է արծանագրել, որ նա կարողացավ գերել մնալ անհեթեթ, անկիրք, անբովանդակ ծեծծեքումներից, որոնցով հեղեղված են գրական նոր սերնդի ներկայացուցիչներից շատերի «ստեղծագործությունները»:

«Ծաղկած ցավ»-ի գրեթե յուրաքանչյուր էջը ստիպում է կանգ առնել և մտածել հավիտենական այն ճշմարտությունների մասին, որ մատուցված են բոլորովին ուրիշ հայացքով, ուրիշ լույսի ներքո: Եվ ուրեմն, ամենայն է այս գիրքը կարողալ հենց այնպես, ինչպես ասում են՝ ոտքի վրա, ձեռքի հետ: Կամիլան այն բանաստեղծներից է, որ ամեն անշան առիթով ձեռքը չի վերցնում գրիչը, իսկ եթե, այնուամենայնիվ, վերցնում է, ապա, իմ տպավորությամբ, քաջ գիտի այն օրերը, որի իլուսիպատակն է ամեն մի ճշմարիտ բանաստեղծ: Այդ օրերը «ձախ ձեռքի» օրերն են, որ ես ձևակերպել եմ այսպես. «Աստված բանաստեղծին երկու ձեռք է տվել նրա համար, որպեսզի աջով գրածը համարձակորեն ճմրթի և դեմ նետի ձախ ձեռքով, երբ անհրաժեշտ է»:

Սա է կատարելության ճանապարհը բանաստեղծի համար: Կամիլայի գիրքը ծնվել է այդ ճանապարհին:

Գրքի առաջաբանը գրել է ճանաչված գրականագետ Ֆելիքս Բախչինյանը, որի

2018թ. ամռան էլ բացառություն

չէր: Ճանաչված զույգի հետ հանրային առաջին հանդիպումը տեղի ունեցավ Շուշիի կերպարվեստի պետական թանգարանում Կամիլա (Երկանեան) Քեշիշյանի նորատիպ «Ծաղկած ցավ» գրքի շնորհանդեսով: Բացման իր խոսքում թանգարանի տնօրեն Լուսինե Գասպարյանն ասաց, որ ամռանը Շուշիի մշակութային կյանքը ամբողջաբանում է Քեշիշյան ընտանիքի վերադարձով: Նրանց վերադարձն ուղեկցվում է տարաբնույթ միջոցառումներով՝ երեկոներ, համերգներ... Այս միջոցառումն ամբողջությամբ տարբերվում էր նրանց մյուս միջոցառումներից: Այս անգամ նշվում է նրա գրքի ծնունդը: Բենահարթակը տրամադրվում է գրքի հեղինակին՝ Կամիլային: Նա ասաց, որ ինքը ցանկացել է գերել մնալ նման դեպքերի համար պաշտոնական արարողակարգից, այլ՝ ծավալել մտերմիկ զրույց՝ համերգ-զրույց:

Գիրքն ընդամենը երկու ամիս առաջ է լույս տեսել Երևանում: Հուլիսին այն Հայաստանի գրողների և արվեստագետների, մտավորականների դատին է հանձնվել Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը. «Բնականաբար, չէի կարող սիրելի արցախցիների դատին էլ չհանձնել ժողովածուն»:

Նշենք, որ դա հեղինակի 6-րդ գիրքն է: Բոլորն էլ հրատարակվել են Երևանում, ասել է թե՛ Կամիլան ճոր անուն չէ գրական կյանքում:

Գիրքը գրված է հայերենի երկու ճյուղավորումներով՝ արևելահայերեն և արևմտահայերեն, դասական ուղղագրությամբ: Հեղինակի խոստովանությամբ՝ իր կյանքում երբեք նպատակ չի դրել ստեղծագործել արևմտահայերեն. «Արդեն 16 տարի ապրում եմ Լիբանանում, և սա նաև արյան կանչ է: Լինելով արևմտներով Արևմտյան Հայաստանից՝ այն իմ մեջ պետք է գլուխ բարձրացներ, պիտի ճչար»: Գիրքը բաղկացած է մի քանի գլուխներից, որոնցում զետեղված են հայրենասիրական, սիրային, համամարդկային և այլ բանաստեղծություններ: «Որպես հայ մարդ, ստեղծագործող՝ ինձ մտահոգում են համաշխարհայնացման այս գործընթացի մեջ հայ ազգի խնդիրները, ու ցանկացել եմ մատուցել վերջի վրա դնել»,- ասաց Կամիլան:

Կամիլայի ելույթը «Ծաղկեցրեց» «Վարանդա» երգչախումբը երկու կատարումով (խմբավար՝ Ջաքար Քեշիշյան):

Ժողովածուի վերաբերյալ գրականագիտական ընդարձակ վերլուծություն կատարեց բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը. «Կամիլայի ստեղծագործական տեսադաշտը համահայկական հեռաստանների տարածք է.

մի կողմից Մայր Հայաստանն է, մյուս կողմից՝ Սփյուռքը ու նաև Արցախը, որի գեղարվեստական պատկերը «15 ամառ Շուշիում» շարքն է: Կամիլայի «Ծաղկած ցավ» ժողովածուն պոեզիայի արտահայտչամիջոցների բարձր և անսովոր մի համադրությամբ է, որին, անշուշտ, անդրադառնալու են լեզվագետ-բանասերները»,-ի մասնավորի ասաց բանախոսը:

Իր խոսքն ասաց ԱՀ գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Ավելորդ չհամարեմք նշել, որ նա Քեշիշյան զույգի քավորն է: Մի քանի տարի առաջ Շուշիում տեղի է ունեցել նրանց ինքնատիպ հարսանյաց հանդեսը: Երաժիշտներն էլ իրենք՝ հարսն ու փեսան էին՝ դաշնամուրով ու շվիով, երգիչները՝ «Վարանդա» երգչախմբի անդամները, մասնակիցները՝ գրողներ, արվեստագետներ:

Երևանում տեղի ունեցած շնորհանդեսի տեսաձայնագրությունից հատվածներ, Կամիլայի բնորոշմամբ՝ ի նշան Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության:

Գրականագետ Սերժ Սրապիոնյանը ոգևորված էր. «Ես չեմ պատկանում այն գրականագետների թվին, որոնք հոգեհանգիստ են կարդում ժամանակակից հայ գրականության համար: Այնուամենայնիվ, ուզում եմ շեշտել, որ այս գիրքը էական տարբերվում է շուշիական հեղեղած գրական միջակայություններից:

Այստեղ բանաստեղծուհին է, այստեղ բանաստեղծի ներքին ցավն է, այստեղ բանաստեղծի մտահոգությունն է, ուրախությունը և ամեն ինչ զարմանալի արված: Այստեղ կա բանաստեղծության նկատմամբ սրբազան

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐՏԱՐՎԵՍԵՑ ԵՎ ԻՆՔՆԱԿԱԶՄՈՒՆՈՒԹՅՈՒՆ



Մարտարվեստ ասելով սովորաբար հասկանում ենք արեւելյան մեծամարտերի ավանդական տեսակներ, ինչպես, օրինակ՝ կարատե, ծյուրո, այկիդո, թաեքվոնդո, ուշու և այլն: Ընդ որում, շատերը գիտեն, որ «դո» վերջավորությունը թարգմանվում է որպես «կյանքի ճանապարհ»:

պես նաև շարունակել հաջողությամբ կատարել տարբեր խնդիրներ:

Ինքնապաշտպանությունը մարտական արվեստի մի մասն է, որի նպատակը դրան տիրապետող մարդու գոյատևության հնարավոր բարձրացումն է: Դրանով է տարբերվում ինքնապաշտպանությունը (զուգահեռ՝ առաջին օգնություն ցուցաբերելու, հոգեբանական և իրավաբանական անհրաժեշտ գիտելիքներ ունենալու) սպորտային մենամարտերից, որոնց մեջ կան կանոններ:

Ինքնապաշտպանության պարապմունքներ՝ որպես առանձին ոճ, դեռևս հայտնի չէ Արցախում: Բայց այդ կենսական կարևորագույն հմտությունը կարելի է ձեռք բերել՝ հաճախելով դասընթացների մարտարվեստների այն փորձառու մարզիչների մոտ, ովքեր հանձն կառնեն փոխանցելու ինքնապաշտպանական հմարներ՝ մեծ շեշտ դնելով պարապողի հոգեբանական և ֆիզիկական պատրաստության վրա, իհարկե, իրենց տիրապետած մարտական տեխնիկայի և կյանքի անձնական փորձի շրջանակում:

Արցախի վիճաբանության և թայջիի ֆեդերացիայի նախագահ և զլխավոր մարզիչ Սայաթ ԲԱՂՊԱՍՐՅԱՆԻ հետ ունեցած հետաքրքիր հարցազրույցի ընթացքում մեկնաբանվեցին ինքնապաշտպանության վերաբերող հարցեր: Մարտարվեստներով շուրջ երկու տասնամյակ մարզվելու և սաներ մարզելու ավելի քան մեկ տասնամյակ փորձ ունեցող մարզիչը կիսվեց նաև խրատներով:

- Սայաթ, ինքնապաշտպանություն սովորելու համար պարտադիր է մարտարվեստ իմանալ:

- Մարտարվեստում կոփված ես դրան լավ տիրապետող մարդը կարիք չունի առանձին դասընթացներ անցնելու, որպեսզի սովորի ինքն իրեն պաշտպանել: Մարտարվեստի պարապմունքներն իրականում միտված են դրան: Պետք է հասկանալ, որ մարտարվեստում արդյունքի հասնելու համար երկար տարիների համառ և համբերատար աշխատանք է պահանջվում: Դա այդքան էլ հեշտ չէ, բայց վարպետությունը երկարատև և քայլ առ քայլ հղկելու արդյունքում յուրացված կարողություններն ու հմտություններն են ամուր ու աշխատունակ: Եթե դիմորդն ուզում է իսկապես իրական կենսապաշտպանություն սովորել, ուրեմն պետք է զինվի համբերությամբ և երկար ժամանակ համառ աշխատելու պատրաստակամությամբ: Իսկ այն դիմորդները, որոնք ցանկանում են ավելի կարճ ժամանակում սովորել ինքնապաշտպանություն, կարող են հատուկ դասընթացներ անցնել այն մարզիչների մոտ, ովքեր զբաղվում են դրանով: Մարզիչն իր հայեցողությամբ կարող է տիրապետած տեխնիկայից ընտրել լավագույն հմարներ, հարվածներ, զցումներ և փոխանցել կամեցողներին: Սակայն արդյունավետության տեսանկյունից, եթե համեմատելու լինենք երկար տարիների փորձ ունեցող մարզիչի տեխնիկան, որն արդեն ավտոմատիզացվել է հասել և այն մարզիչի կարողությունները, որը նույն տեխնիկան ավելի սեղմ ժամկետում է յուրացրել, պարզ է, որ առաջին դեպքում արդյունավետությունը բարձր կլինի: Բայց եթե համեմատենք ինքնապաշտպանության դասընթացներ թեկուզ կարճ ժամանակում հաճախող մարդու և այն մարդու կարողությունները, որը ոչ մի

մարզածե կամ մարտարվեստ չի պարապում, այստեղ արդեն արդյունավետությամբ շահում է պարապողը:

- Մարզիչը, որի գործունեությունը ռիսկոս մրցելու համար մարզիչներ նախապատրաստելն է, կարող է նաև ինքնապաշտպանության լավ հրահանգիչ լինել:

- Դա կախված է մարզչի վարպետությունից, նրա տիրապետած տեխնիկայից: Ընդհանրապես, եթե խոսքը վերաբերում է մարտարվեստներին, ապա դրանցում վարպետության հասած մարդն արդեն իսկ լավ մարզիչ է և հրահանգիչ է: Խոսքը ոչ միայն ֆիզիկապես կոփված լինելու կամ իր նախընտրած մարտարվեստի հմարներին տիրապետելու մասին է, այլ նաև հոգեպես և բարոյապես կրթված լինելու, իր գիտելիքներն ու կարողությունները պատշաճ մատուցել կարողանալու մասին: Այսինքն՝ կայացած մարզիչը կարող է համակողմանի պարապմունքներ անցկացնել, սակայն որոնց մեթոդական և տեխնիկական մասերը կտարբերվեն իրարից, հետևապես, կտարբերվի նաև մարզչի մոտեցումը պարապողներին: Ռիսկոս մրցելու համար նախապատրաստելիս հիմնական ուշադրությունը սեւեռվում է մրցույթի անցկացման կանոններին: Դա ավելի շատ սպորտային բնույթ ունի, ոչ թե իրական մարտի: Իսկ, օրինակ՝ առօրյա կյանքի «մարտերում» հաղթելու համար կանոնների տեսքով սահմանափակումներ չկան, ուստի այդ դեպքում փոխվում է նախապատրաստելու ձևը՝ պարապմունքի ընթացքում դիտարկվում են զանազան կենսական իրադրություններ և դրանցից արդյունավետ դուրս գալու միջոցներ:

- Լինելով մարտարվեստի փորձառու մարզիչ՝ Ձեր սաներին դեպի ո՞ր կողմն եք ուղղորդում:

- Ներկա պահին պարապմունք-

ներ ենք անցկացնում վիճաբան և թայջի ոճերով: Վիճաբանը հզոր մարտական արվեստ է, ինքնապաշտպանության արդյունավետ համակարգ: Այն ընդգրկված է ուժեղագույն պաշտպանական համակարգ ունեցող երկրների զորավարություններում, անվտանգության համակարգի հիմքում: Վիճաբանի հմարները հարմար են տարբեր կառուցվածք ունեցող մարդկանց համար՝ անկախ սեռից, տարիքից, գործունեության ոլորտից: Վերջին տարիներին սկսել են նաև վիճաբան մարտարվեստի մրցաշարեր անցկացնել, որն ավելի շատ սպորտային բնույթ ունի: Ուղղվածությունը կախված է առավելապես մարզիչի կամ դիմորդի ցանկությունից, թե ինչ է նախընտրում և ինչ նպատակով: Վիճաբանում ոսկե կանոն կա փոխանցում ենք, բայց չենք պարտադրում: Մեր ֆեդերացիայում ինքնապաշտպանության, ֆիզիկապես կոփվելու, կատարելագործվելու, ինչպես նաև մրցաշարերին նախապատրաստվելու բոլոր հնարավորությունները կան: Բացի վիճաբանից, նաև թայջի պարապմունքներ ենք անցկացնում, որում ներառված են առողջարար, շնչառական վարժություններ: Կախված դիմորդի պահանջներից, ցանկությունից՝ որոշվում է պարապմունքների ուղղորդվածությունը:

- Բացի հմարներից և ֆիզիկական կոփվածությունից, ի՞նչ հատկություններ են զարգանում վիճաբանով պարապող մարդկանց մոտ:

- Մենք աշխատում ենք անձի ոչ միայն արտաքին կողմի, այլև ներքին ուժի, արագության, տեխնիկայի և տակտիկայի վրա: Ձեռավորվում է սթափ ինքնավստահություն, ներքին համագտություն: Այսինքն՝ ձեռք է բերվում ներաշնչակալություն՝ արտաքինի և ներքինի միջև: Վիճաբան պարապելիս կատարվում են մի շարք մարտական տարրեր ու

հմարներ, ամրակայվում՝ դրանք կատարելով տարբեր իրադրություններում, քննարկվում և աշխատանքներ են տարվում այն ուղղությամբ, թե ինչպես պահել իրեն և դրսևորել կարողություններն ու հմտությունները ծագած իրադրությունում, որի արդյունքում հաղթահարվում է վախը, առաջանում է ցանկացած իրավիճակ վայրկենապես ճիշտ գնահատելու և ճիշտ որոշում կայացնելու կարողություն:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք վտանգավոր իրավիճակի մեջ հայտնված մարդուն:

- Նա պետք է գործի իրավիճակին համապատասխան: Երբեմն կարելի է բախումը կանխել խոսքով: Եթե դիմացինը նկատում է ոգու հզորությունը, դժվար թե կամենա այդ հզորության դեմ մարտի ելնել: Պետք է կարողանալ ճիշտ և դիպուկ բառեր օգտագործել: Պետք է հստակ կանխատեսել նաև պատասխան քայլերը, պատրաստ լինել դրանց: Երբեմն էլ այնպիսի իրավիճակ է ստեղծվում, երբ անխուսափելի է ֆիզիկական բախումը, այլապես հետդարձ չկա: Իմ նպատակը՝ որպես մարզիչ, պահի կանչին արագ և ճշգրիտ արձագանքել կարողանալու հմտություններ սովորեցնելն է: Այստեղ շատ բան որոշում է ոչ միայն տեխնիկան, այլև մարդու ներքին վիճակը, ներուժը, բնավորությունը, ինքնատիրապետելու աստիճանը:

- Իսկ պատահե՞լ է, որ ինքներդ հայտնվեք բախումնային իրավիճակում և օգտագործեք Ձեր հմտությունը իրավիճակից դուրս գալու համար: Ինքնապաշտպանության դասեր տալու համար կարևոր է մարզչի անձնական փորձը:

- Ինքս կռվարար բնավորություն չունեմ, սակայն դեպքեր եղել են: Պատահել է՝ դիմել եմ ֆիզիկական հմարների: Պատահել է, որ դրսևորելով ներքին համագտությունս և ոգու ուժ՝ բախումնային իրավիճակում ավարտվել է միայն գրույցով: Մարզչի մոտ անձնական փորձի առկայությունը ցանկալի է, քանի որ փորձառու մարդը ավելի լավ կարող է հասկանալ իրավիճակը, դիմացի մարդուն, հետևապես և ավելի լավ կարող է սովորեցնել իրական մարտավարություն:

- Այսպիսով, ովքե՞ր կարող են հաճախել ինքնապաշտպանության դասընթացներին:

- Մեր ֆեդերացիայի դռները բաց են բոլորի համար: Կարող են հաճախել ինչպես երեխաներ, այնպես էլ մեծահասակներ, ինչպես աղջիկներ, այնպես էլ տղաներ: Եթե կա ցանկություն հոգեպես ուժեղանալ ֆիզիկական վարժությունների և հմարների միջոցով, ուրեմն ինքնապաշտպանության պարապմունքներն անհրաժեշտ են այդ մարդուն: Եթե սեր կա դեպի մարտարվեստները, ապա վիճաբանի պարապմունքները կհետաքրքրեն ձեզ: Այսպես կարելի է երկարացնել «թե»-ների ցանկը, մինչդեռ կարելի է անձամբ այցելել, դիտել որեւէ պարապմունք, ծանոթանալ մարզիչների հետ, տեղում եզրակացություններ անել և ընտրել, թե որ զբաղմունքն է հոգեհարազատ:

խոսք հիշատակի

ՄԱՆՅԱ ՄԻՐԶՈՅԱՆ



Անսպասելի լուրը ցնցեց բոլորիս...

2018թ. օգոստոսի 10-ին ողբերգական ավտովթարի զոհ դարձան 35-ամյա որդին և մանկավարժ 60-ամյա մայրը:

Մանյա Մամիկոնի Միրզոյանը ծնվել է 1958թ. հունիսի 27-ին, Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ գյուղում՝ մտավորականի ընտանիքում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը: 1980թ., ավարտելով համալսարանը, գործուղվել է Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղ՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

Մեկ տարի անց ամուսնացել է հարևան Կոճողոտ գյուղում, ստեղծել գեղեցիկ ընտանիք:

Գիտելիքներով հարուստ, օժտված մարդկային բարոյական վեհ հատկանիշներով՝ համեստությամբ, բարության, ազնվությամբ, նա կարողացել է իր գիտելիքներն ու բարոյական բարձր հատկանիշները փոխանցել սաներին: Շուրջ 36 տարի մաթեմատիկա և ֆիզիկա է դասավանդել Կոճողոտի միջնակարգ դպրոցում, վայելել իր սաների, գործընկերների, հասարակության սերն ու հարգանքը:


Հարգված գործընկերոջ, սիրելի ուսուցչի, սիրասուն մոր ու տանտիկնոջ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների հուշերում, իսկ նրա դյուբիչ ձայնը ընդմիշտ կմնա նրա սաների ու գործընկերների ունկերում:

Կոճողոտի միջնակարգ դպրոցը դժվար կհամակերպվի այս անդառնալի կորստի հետ:

Մարտակերտի շրջանի Կոճողոտի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԳԵՂԱԴԻՏԱԿ

ՍԱՐՅԱՆԻ ԶԱՐՄԱՆԱԽ ԴԱՏԱՌԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԿՏԱՎՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱՄ ՅՈՒՅՆԱԴՐՎԵԼՈՒ Ե ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Առաջին անգամ Հայաստանում՝ Մ. Սարյանի տուն-թանգարանում բացվող «Սարյանը և Ֆրանսիան» ցուցահանդեսում կներկայացվի Վարպետի փարիզյան շրջանի (1926-1928) «Կովկասյան քաղաքի փողոց. Թիֆլիս» (1927թ.) նկարը:

Սեպտեմբերի 19-ից նոյեմբերի 14-ը կայանալիք ցուցահանդեսը նվիրված է Հայաստանում ֆրանկոֆոնիայի զարթոնքին:

Panorama.am-ը հետաքրքրվեց Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզաննա Սարյանից, թե ինչ կտավ է, ինչու է առաջին անգամ ցուցադրվում, արդյո՞ք մինչ այդ նկարը Հայաստանում չի եղել:

Ռ. Սարյանն ասաց, որ Վարպետի՝ փարիզյան շրջանի 37 նկար Փարիզից տունդարձի ճանապարհին այրվել է նավի վրա հրդեհի ժամանակ, իսկ «Կովկասյան քաղաքի փողոց. Թիֆլիս» նկարը, ի թիվս այլ 5 նկարների, Սարյանը ի պահ էր տվել Ֆրանսիայում իր բարեկամ Աննա Բուդախյանին այն պայմանով, որ վաճառի և այդ գումարով իրեն ուղարկի ներկեր, կտավներ, վրձիններ, քանի որ Խորհրդային Միությունում այդ ամենը դժվար էր գտնվում, լավ որակի չէին:

Սակայն տարբեր կատալոգներում նշվել է, որ «Կովկասյան քաղաքի փողոց. Թիֆլիս» կտավը նույնպես այրվել է: Սարյանի փարիզյան նկարների գերակշռող մասը լուսանկարված էր Փարիզում, գոյություն ունեն սև ու սպիտակ լուսանկարներով: Այս նկարը սև ու սպիտակ տարբերակով ևս հայտնի էր:

«Կտավի մասին առաջին հիշատակումը մենք գտնում ենք Ռուբեն Դրամիայանի 1960 թվականի կատալոգի մեջ, որտեղ Սարյանի խոսքերի հիման վրա Դրամիայանը գրել է՝ այդ նկարը գտնվում է Փարիզում՝ Տիգրան-Խան Քելեկյանի հավաքածուում: Արդեն հասկանալի էր, որ այդ նկարը չէր կարող այրված համարվել»,- նշեց Ռ. Սարյանը՝ ներկայացնելով պատմությունը, թե ինչպես է այն հայտնվել Տիգրան-Խան Քելեկյանի հավաքածուում:

«2002 թվականին Սարյանի նամակառու առաջին հատորը հրատարակեցի, որտեղ գետնից եմ Սարյանի նամակը՝ ուղղված հասարակական գործիչ, գրականագետ, թարգմանիչ Արշակ Զոպանյանին: Հասկանալի է, որ պատասխանն էր Զոպանյանի նամակին: Զոպանյանը գրել էր, որ Տիգրան-Խան Քելեկյանը հետաքրքրվում է ձեր փարիզյան նկարներով, ուզում է գնել: Սարյանն ուղղորդում է նրան՝ խնդրում են դիմել Աննա Բուդախյանին, ում տվել են ի պահ նկարներս: Գրում է այս և մեկ այլ նկարի անուն, ասում, որ իր ուժեղ գործերից է: Այսինքն՝ հենց Սարյանի կողմից է գնահատվել այս նկարը՝ որպես փարիզյան շրջանի իր ուժեղ գործերից:

Այդպես էլ եղավ. Սարյանի փարիզյան շրջանի երեք աշ-

խատանք հանգրվանում է Տիգրան-Խան Քելեկյանի հավաքածուում»,- պատմում է Ռուզաննա Սարյանը:

Իսկ ո՞վ էր Տիգրան-Խան Քելեկյանը: Ռ. Սարյանն ասաց, որ հետաքրքիր անձնավորություն էր, արվեստասեր, բարեգործություն էր անում, ֆինանսական օգնություն էր ցուցաբերել Բրաքին, Պիկասոյին, երբ նոր էին սկսում իրենց կարիերան:

1951 թվականին՝ Տիգրան-Խան Քելեկյանի մահից հետո նրա մոտ գտնվող Սարյանի նկարները տարբեր հավաքածուներում են հայտնվում: Սարյանի տուն-թանգարանի տնօրենն ասաց, որ մինչև 2011 թվականը որևէ տեղեկություն չուներինք «Կովկասյան քաղաքի փողոց. Թիֆլիս» կտավի մասին:

Ռ. Սարյանին հաճախ են ուղարկում Սարյանի կտավներից լուսանկարներ, որպեսզի իր կարծիքը հայտնի՝ բնօրինակին է, թե՞ կեղծ:

«Ավելի շատ է հուսահատությունը, քանի որ կեղծիքները շատ են: Զարմանում եմ, թե ինչքան շատ մարդիկ են զբաղվում արվեստի գործերի գեղծարար ու թ յ ա մ ք, ի հարկե, նաև Սարյանի գործերի: Այս անգամ, երբ բացեցի նամակը, հ ա ն կ ա թ տեսնում եմ այն նկարը, որից քաջատեղյակ եմ սև ու սպիտակ լուսանկարից: Գույների մեջ տեսնում եմ հրաշալի սար-



յանական գույներ, հրճվանքից ու ուրախությունից չզիտեի՝ ինչ անել: Նամակ ուղարկողը Նոր Զելանդիայից էր, հետաքրքրվում էր՝ ինչ գունարան էր պատրաստ վճարել նկարի համար: Այդ նկարը չկարողացանք գնել: Այն վաճառվեց աճուրդում: Մեր հայերից ոչ ոք մոտ չգնաց այդ նկարին, չհետաքրքրվեցին, չնայած թերթերի միջոցով դիմել էի: Ինձ ուղղակի ասվեց, որ մեզ չի հետաքրքրում և՛ վերջ: Նկարը գնեց մոսկվաբնակ՝ արվեստի գործեր հավաքող, ազգությամբ ոչ հայ: Կտավը գնաց Մոսկվա: Այնուհետև կրկին աճուրդում է հայտնվում: Կրկին դիմեցի մեր հայրենակիցներին, ովքեր ի վիճակի էին գնել, գոնե կմնար հայկական օջախում: Ոչ ոք չարձագանքեց: Հուսահատ վիճակում էի: Բայց մեր բախտը բերեց, գնեց մոսկվաբնակ՝ արվեստի գործեր հավաքող Արթուր Դանիելյանը»,- պատմեց Ռուզաննա Սարյանը:

Նա խնդրել է Արթուր Դանիելյանին, որ կտավը բերի Հայաստան՝ ցուցադրության:

«Այս ցուցահանդեսը դրանով պետք է արժևորվի: Իսկապես, մեծ իրադարձություն է մեզ համար: Ինձ թվում է՝ մեծ հետաքրքրություն առաջ կբերի, շատերը կցանկանան իրենց աչքով տեսնել այդպիսի հետաքրքիր ու զարմանալի պատմություն ունեցող այդ նկարը»,- ասաց Ռուզաննա Սարյանը:

Նա խնդրել է Արթուր Դանիելյանին, որ կտավը բերի Հայաստան՝ ցուցադրության:

«Այս ցուցահանդեսը դրանով պետք է արժևորվի: Իսկապես, մեծ իրադարձություն է մեզ համար: Ինձ թվում է՝ մեծ հետաքրքրություն առաջ կբերի, շատերը կցանկանան իրենց աչքով տեսնել այդպիսի հետաքրքիր ու զարմանալի պատմություն ունեցող այդ նկարը»,- ասաց Ռուզաննա Սարյանը:

Այդպես էլ եղավ. Սարյանի փարիզյան շրջանի երեք աշ-

ՆՈՐ ԲԱՆԱՍԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանդիպեցին մեր աչքերը մեզնից թաքուն, Մեզնից թաքուն իրար գրկած մնացին. Իսկ ահա շուրթերը, Բոլոր վիրավորանքները վերստին հիշել, Փորձում են մեզ մեղավոր հանել, Շուրթերը, սիրո համար ստեղծված, Այրում են մեր սերը... Վառված սիրո արտացոլանքն են մարած աչքերը: Բայց մենք դեռ կոտորները տնկած, Ապացուցում ենք, որ եղել ենք ճիշտ, եղել ենք արդար, Փորձում ենք մեր բարձրության վրա մնալ՝ Զհասկանալով, որ ընկնում ենք ցած:

Այնքան խոսքեր կան, որ սպանել գիտեն, Իսկ ահա այսպես կրակում են բառերը, Որոնք անգամ չեն էլ հնչել, Որոնց կարոտով ապրում ենք մեռած... Խեղճ աչքերս քո աչքերին ամուր գրկած մոխրանում են, Մոխրանում են... հպարտ...

Լինում է, չի լինում... Այսպես են սկսվում բազմահազար հեքիաթներ: (Այնքան ենք կարդացել, որ անգիր գիտենք): Հորինում ենք մենք էլ մի նոր հեքիաթ, Ու սկսում ենք այնտեղ ապրել, Մինչև մի օր, Երբ զուգահեռ հեքիաթներում Գորտը մի համբույրից արքայազն է դառնում, Կամ Մոխրոտը հանդիպում է իր ասպետին, Խնձորի տեղ մենք ենք ընկնում երկնից, Ընկնում ենք կյանք... Շատ դժվար ենք մենք հասկանում, Որ կյանքը հեքիաթ չէ, Այստեղ ամեն մեկը մի սեփական դժոխք ունի, Ու մենք վերադառնում ենք այնտեղ ամեն անգամ, Երբ սկսում է ցավել մեր կրծքավանդակում ինչ-որ մի օրգան, Որը դեռ չի բացահայտվել, որի անունն անգամ չգիտենք, Եվ միայն ցավն է ստիպում, որ նրան զգանք... Մի ահավոր լուր էլ ունեն, հեքիաթասեր իմ բարեկամ, Այդ ցավի դեմ չունենք ոչ ճար ու ոչ էլ դեղ...

Իսկ մեզ մանկուց ի վեր հեքիաթներ են պատմում, Գուցե սովորեցնեիք մեզ, թե ինչպես ապրել, Ինչպես ընկնելուց հետո կանգնել, Մեջքումդ դառնակ մխրճելուց հետո սովորել թիկնել, Ներելուց հետո մոռանալ, Էլ չհիշել, երբևիցե երեսով չտալ, Ինչքան էլ ապարդյուն թվա՝ պայքարել, Եթե անգամ ապրտվել, նորից փորձել, Թե սխալվել ուղղվելու տարբերակ փնտրել, Ու թե կորցնել՝ շարունակել ապրել, Թե սիրող հանձնվել է, նրան համոզել, որ պետք է զարկել:

Հեքիաթների տեղ կյանք սովորեցրեք մեզ, Թե չէ հեքիաթներից մեծանում ենք ու մոլորվում, Սարսափով ենք մենք գիտակցում, որ մեզ խաբել են, Հեքիաթներ չկան... ... Ու մեզ մեր դժոխքից ոչ ոք չի փրկի, Պիտի կարողանանք ապրել հենց այսպես՝ Դժոխքը մեր մեջ՝ դժոխքից փախչենք...

Հերմինե ԼԱԼՍԱՆ ք. Շուշի

ԺՊԻՏՆԵՐ

Նախկին ուսուցչի, փոխտնօրենի հուշատետրից

Պատմության տարեց ուսուցիչը օրվա դասաթեման բացատրելու ժամանակ ասաց. - Երեխաներ, ենթադրենք մեր Օլեգը կապիտալիստ է... Օլեգը՝ դասարանի լավագույն աշակերտներից մեկը, անցավ «հակազորի»,- Ենթադրենք մեր ընկեր Քարամյանն էլ ստրուկ է... - Այ տղա, Օլեգ, լռիր: Ես ընդամենը օրինակի համար եմ ասում,- «ըմբոստացավ» չփոքրված ուսուցիչը: - Ես՝ նույնպես,- ժպտադեմ ու հաղթական պատասխանեց սրամիտ Օլեգը:

- Այ տղա, Գարոն, շարքում ուղիղ կաղնի,- մարմնակրթության ոչ մասնագետ, տարեց ուսուցիչը դասի ժամանակ դիտողություն արեց մի քիչ անկարգապահ Գարունի: - Կաղնին դու ես,- գայրությունը ասաց Գարունը: (Ուսուցիչը պետք է ասեր՝ կանգնիր):

- Ովքե՞ր էին գովերգում Խանդութ Խաթունի գեղեցկությունը,- հարցրեց ուսուցիչը: - Խանդութ Խաթունի գեղեցկությունը գովերգում էին զազանները, - պատասխանեց Հայկը (պետք է ասեր՝ գուսանները):

- Երեխաներ, Աֆրիկայով ո՞ր խոշոր գետն է հոսում, - հարցնում է աշխարհագրության ուսուցչուհին: - Աֆրիկայով հոսում է մայր Արաքս գետը,- համոզված տոնով պատասխանում է Սասունը:

Մայրաքաղաք էքսկուրսիա մեկնած գյուղական դպրոցի աշակերտներին երիտասարդ ուսուցիչը դիմեց. - Դե՛, երեխաներ, սկզբում գնանք տեսնենք փիղը, արջը, առյուծը...

Սրամտությամբ, հունորով փայլող Բորիկը սկսեց հակաճառել ուսուցչին. - Ոչ, ոչ, ընկեր Հայրապետյան... Նախ՝ գնանք տեսնենք էլը... - Ինչո՞ւ,- զարմանքով հարցնում է ուսուցիչը: - Որպեսզի բոլորը տեսնեն, որ մենք նույնպես քաղաքի դպրոցի աշակերտներ ենք, այլ ոչ թե գյուղի,- ժպտադեմ պատասխանում է Բորիկը:

Հավաքեց Ռովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorceter@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրպարություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 01.09.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: